

2  
290

✓

ԱՇԱԿԵՐՏԻ  
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ԲՆՏԱՆԻՔԸ

371.3  
Խ-96

ԳԵՂԱԿԱՆ  
ՑԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
1985

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Վարչական գործադրության  
նախարարության

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Վարչական գործադրության  
նախարարության

371.3  
Խ-96

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Վարչական գործադրության  
նախարարության  
Վարչական գործադրության  
նախարարության

2802-10

Լ. ԽՈՒԴՈՅԱՆ

379.1

890



ԱՇԱԿԵՐՏԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ԸՆՏԱՆԻՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՎԵՎԸՆ  
1935

Այս աշխատության նպատակն եւ ժամանվացնել ծնողներին ընտանիկան զատարակության գլխավոր ինքնուրներին և կազմակեցչական ձեւերին, առաջին հերթին նկատի ունանալով աշակերտի բնաւանեկան զատարակությունը:

Դաստիարակության բնագավառում վերջըն 4-5 տարում համ Կոմ (ը) կուտակցության և խորհրդային իշխանության պատմական նշանակություն ունեցող վորոշությունները մի շաբթ կարերաբորչյան խսդիլներ տուածազբեցին, կատված աճող աերնքի կօմ. դաստիարակության հետո

Առաջնային պարոցն արդ ժամանակաշրջանում խօսքը նվաճումներ ունեցավ, կարգապահության դիտական հեծողներին տիրապետելու և ընդհանրապես աշխատանքի գորակը բարձրացնելու ուղղությամբ, առկայն և լինելու աշխատական սկզբանական մասին փաշ մի տարածայնություն է կարող լինել, առաջ կան դժվարություններ դաստիարակության հարցերի կոնկրետացման բնագավառում, զորտեղ հարցերը գետ բավականաչափ ուսումնասիրված և զիտականողեն մշակված չեն: Այդ ամենը մեծ չափով վերաբերում է մատնադրասկու ընտանիքան դաստիարակությանը, զորքի մասին փերջին տարբերում չի յեղել գոշմիայն վորեն մշակված դիտական աշխատական ուղղամասությունն այլ չի յեղել պրեթե նույնիսկ մաքերի փոխանակություն:

Հաշվի առնելով այս հանդամանքները՝ գտնում եմ, զոր այս աջլուտությունն ազատ չի թերություններից, և շատ ջնորհակալ կլինենք, յեթե մեր սահմանափառներն ու ծնազնենք ողնուն լրենց քննազատությամբ և ցուցումներով (Հասցե-Ծերեան, Արևակիրդյան փողոց, № 11, Մանկավարժության-Մանկապահության Գիտահիմադրության Ինստիտուտ, 1, Խուզոյանին):

## Հեղինակ



Պատ, խմբագիր Պ. Պ ալլ ան  
Տեխ. խմբագիր Պ. Զ ենյ ան  
Ազգ խմբագիր Հ. Պ ետը ն ս յ ա ն  
Մշշագիր Հ. Ք ոլու խանյան  
Հրատ—3477, Գլուխ 228, Պատմեր 1159, Տիրաժ 1.000  
Հանձնված ե արտադրութ, ան 9 հոկտեմբերի 1935 թ.  
Ստորագրված ե տպելու 11-նոյեմբերի 1935 թ.  
Պատմատի Տպարան, Երևան, Խուճի Ն 4

## 1. ԱՇԽԱԲԵՐՏԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԵՒԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Խորհրդային յերկրում աճող սերնդի վրա ամենախոշոր և վերին աստիճանի պատվավոր պարտականություն և գրվում — այդ սերունդն այնպիսի դաստիարակություն պետք է ստանա, վոր ի վիճակի լինի կոմունիզմ կառուցելու։ Ընկ. Լենինը մեր յերեխաների մասին ասել ե, վոր նրանք «կտեսնեն կոմունիզմի բարզավաճումը», վոր նրանք «լրիվ չափով կոպտիկն հեղափոխականների կրած զոհաբերությունների և չարչարանքների պատուղներից։ Մինչև հիմա միայն հեքիաթի մեջ եր խոսք լինում այն մասին, թե ինչեր կտեսնեն մեր մանուկները, իսկ հիմա, ընկերներ, դուք պարզ տեսնում եք, վոր սոցիալիստական հասարակակարգի մեր հիմնաղբած շենքն ուտոպիա չե։ Ե՛լ ավելի ջանամիրությամբ այդ շենքը կկառուցեն մեր մանուկները» (1919թ, մայիսի 1-ին Կարմիր հրապարակում Լենինի արտասանած ձաւից):

Այդ ժամանակաշրջանում խորհրդային յերկիրը կոմկուսակցության գեկավարությամբ և ընկ. Ստալինի առաջնորդությամբ անցել և սոցիալիզմի կառուցմանը: Առաջին հնգամյակն ավարտեցինք չորս տարում. մեր յերկրի գեմքը միանգամայն փոխվեց. յետամասաց ազրաբային յերկրից Միությունը դարձավ ինդուստրիալ ազրաբային յերկր՝ մեքենայացված և կոլեկտիվացված գյուղատնտեսությամբ: Յերկրորդ հնգամյակը նոր խրնոցիր առաջարիեց: Կառուցվում ե անդամակարգ հասարակակարգ: «Դրված ե նոր մարդու, բազմակողմանի զարգացած մարդու գաստիարակման խնդիրը» (Լենին): Նա պետք է յուրացնի գիտությունները, առանց վորի անկարող կլինի սոցիալիստական հասարակակարգի կառուցման աշխատանքներին մասնակցելու: Նոր մարդուց պահանջմում ե տեսակետեւ տեխնիկալին, պահանջման

վում և տիրապետել աշխատանքի կուլտուրային։ Նոր մարդուց ուսանանջվում և լինել կիրթ, կուլտուրական և գինված կոմունիստական բարոյագիտությամբ, կարողանալ անհատական շահերը համակցել կոլեկտիվի շահերին, յենթարկել կոմունիստական հասարակակարգ կառուցելու գործին։ Թե Մարքսը, թե Լենինը և թե Ստալինը խոշոր նշանակություն են տվել աճող սերնդի գաստիրակության հարցերին։ Խորհրդային յերկրի մանուկները պետք են լինեն առողջ, սաքուր, նորանք պետք են սովորեն և աշխատեն՝ զորպես սոցիալիզմի մարտիկներ (զորպես բոլելիներ)։ Այդ առումով մեծ աշխատանք են պահանջվում խորհրդային դպրոցից։ Այդ պատասխանառու քաղաքական խնդրում ձնողները պետք են ոժանդակեն դպրոցին։

## 2. ՄԱՆԿԱՆ ՇՐՋԱՊԱՏԸ

Մեր յերեխաները դեռևս լավ չեն ուսումնասիրված, սակայն մի բան ակնհայտ են, վոր մեր յերեխաները մեծ չափով տարբերվում են մինչ-ինդականի վրա չափով յերեխաներից։ Այդ տարբերությունը մեր յերեխաների մի շարք զրական հատկությունների մեջ ե գտնվում, այնպիսի հատկություններ, վորոնք չկային մինչ-ինդականի յերեխաների մեջ, հատկություններ, վոր հաճախ չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել ձնողներից վորմանք։ Հենց այն ակնհայտ փաստը, վոր մեր յերեխան աճում և դաստիրակվում ե սոցիալիստական շինարարության շրջապատում, վոր նա չի կրել ցարական և դաշնակցական ռեժիմի ազդեցությունը, ականատես չի յեղել զաղրելի տեսարաններին, այդ արդեն սեղ համար խոշոր գրավական և հանդիսանում յերեխաների դաստիրակլության գործը լավ հիմքերի վրա դնելու։

Մեր յերեխաները գիտեն նոր կյանքը, գիտեն մեր թշնամիներին, տեսնում են մեր պայքարը և մասնակցում են այդ պայքարին։

Դպրոցում վերացվել են հին դպրոցի բացասական կողմերը՝ ծեծը, յերեխայի ինքնասիրության ձնշումը, կեղծիքը, անմիտ ու անիմաստ ներշնչումները, սնուտիապաշտությունը։ Դրանց փոխարեն մեր դպրոցականի առջև դրվում ե գիտակցական դիսցիլինա, գիտությունների հիմունքներին տիրապետու-

իրական գիտելի ֆներ ստանալու խնդիր։ Մեր յերեխաները ձեռք են բերել լայն աշխարհայացք, ձեսներեցություն, հասարակական կյանքին և պայքարին մասնակցելու կարողություն։ Նայեցնք ձեր շուրջը, կարգացնք մեր մամուլը՝ մեր յերկրի զանազան անկյուններում ամեն որ նոր բան կտեսնեք ու կլսեք. մի տեղ 12 տարեկան յերեխան նոր յեղանակով պլաների մողել և կառուցել, վորը 500 մետր բարձրացել ե. մի ուրիշ տեղ ելեկտրոփոնի նոր ձեռնուրեք այլն և այլն։ Ամենուրեք նրանց մեջ նոր կյանքն ե խոսում։

Յերեխաներն զգում են, թե ինչ խնամքով են մեր կուսակցությունը և իշխանությունը վերաբերվում դեպի մանուկ սերունդը։ Դուք տեսել եք մեր յերեխաների յերթը տոնակատարություններին, պիոներական հավաքին. Ինչ սիրով և աշխուժությամբ նրանք, համակված բարձր հույզերով, քայլում են ուրախ և լուրջ։ Այդ լրջության մեջ կա ապագայի մեծության և վեհության գիտակցություն։

Միլիոնափոր յերեխաներ մասնակցում են զանազան արտադպրոցական խմբակներին՝ աշխատանքներին՝ պատահ բնասերների, տեխնիկա ուսումնասիրողների, Փոտոխմբակի, սաղիուրդների, գրական խմբակի, Փիզիկուլտուրնիկների աշխատանքներին և այլն, և այլն։ Դրանք բոլորը լրացնում են դպրոցի աշխատանքները։ Յեվ այդ մասսայից ե, վորից խորհրդային յերկիրը ստանալու յերեխաները, տեխնիկները, գյուղատնտեսները, բժիշկները և մյուս մասնագետները։ Հին թղթախաղին, վեգիտացալուն փոխարինել են լրագիրը, գիրքը, վալեյբոլը, վորոնք անմատչելի եյին նախահեղափոխական յերեխային։ Ահա ինչ ե ասում Մաքսիմ Գորկին ժամանակակից մեր յերեխաների մասին։

Ճինչ ուղղած մանուկների նամակներից յես տեսնում եմ՝ վորքան խորն ե թափանցում մեր յերեխաների գիտակցության մեջ նոր կուլտուրայի աճման պրոցեսը։ Յերեխաների յերգերից տեսնում ես, թե վորքան խորն ե զարգացել նրանց մեջ հասարակական շահերի գիտակցությունը, վորքան մոտ ե նրանց զգացմունքին արագընթաց իրականությունը, վորքան գեղեցիկ գիտեն նրանք այդ իրականությունը։ Ժամանակակից մեր յերեխաների իմաստությունը, թվում ե, վոր բոլորովին այլ ե,

քան հայրերի իմաստությունը։ Յերեխաներն աճում են վորպետ կոլեկտիվստներ—ահա մեր իրականության խոշորագույն նըւ վաճռմաները։

Ճիշտ և բնորոշում մեծ գրողը մեր յերեխաներին։

Մեր յերեխաները կտրված չեն հասարակական յեռուն կյանքից։

«Պրավդա»—յի 1935թ. մարտի 6-ի առաջնորդողը դաստիարակության խնդիրների մասին՝ մի ամբողջ ամիս բոլոր կոլեկտիվների և դպրոցների ուսումնասիրության առարկան եր դարձել, բացատրում և մասսայականացնում եյին «Պրավդա»—յի դրույթները։

Այս ձեզ մի պիոների նամակ։

«Որեցոր բարձրանում ե դիսցիպլինա պահպանելու գիտակցությունը, դիսցիպլինայի գիտակցության հետ միասին բարձրանում ե նաև ուսման վորակը։ Առաջ յես ֆիզիկա չեյի սիրում, վորովհետեւ չեյի զբաղվում, այժմ յես լավ զգում եմ, թե ինչ մեծ նշանակություն ունեն զպրոցական բոլոր առարկաները։ Գասատվի հետ միասին կարգի բերինք լարորատորիան, փորձեր ենք կատարում, փորձանոթներ և գործիքներ ենք պատրաստում, և մենք հիմա միայն զգում ենք, վոր ֆիզիկա յենք սովորում»։

Այդ նամակը բացառություն չե։ Ամենուրեք մեր յերեխաների մեջ բեղմանավոր աշխատանքներ են տեղի ունենում։ Հետեւ վեցք «Պիոներ կանչ»—ին, «Պուօհերսկայ որածա» և մյուս մանկական թերթերին, և գուշ կտեսնեք բազմաթիվ նամակներ այդ ուղղությամբ։ Մի տեղ յերեխան այս կամ այն գյուտարարությունն ե արել, մի ուրի, տեղ՝ հասարակական աշխատանք, այս կամ այն շնորհալի գործն ե կազմակերպել։ Մեր յերեխաների մեջ անսահման ձեռներեցություն կա։

Մեր մանուկների մեջ կա անսահման կորով և սեր գեղի հասարակական աշխատանքը, ղեղի պետական-հասարակական սեփականությունը։ Նրանք ընդունակ են հերոսական քայլերի։

«Պիոներ կանչ»—ի 1935թ. №-15-ում թղթակցություն կա այն մասին, թե ինչպես 14 տարեկան պիոներ ԳՈՒՐԴԵՆ ՄԻ ՔԱՅԵԼՅԱՆՆԵՐ կարայագ կայարանի մոտ փրկում և գնացքը՝ ժամանակին հայտնելով ունի ճեղքած լինելու մասին։

1934 թ. գեկտեմբերի 18-ի համարում նույն «Պիոներ կանչ»-ից մենք իմանում ենք, վոր փոքրիկ պիոներ ՍԱՄՎԵԼ ԽԱԶԱՅԻՐ-ՑԱՆՆԵՐ Զաջուռից քաղաք գնալիս տեսնում ե, վոր իրկաթդիմք քանդակած ե, շուտով պետք ե անցնի և—57 գնացքը, ժամանակական կարմիր զրոյակներով, հրթիռներով շտապում են մասսաված տեղը։ Ենց գնացքը մոտենալիս նըւրանց հաջողվում ե կանգնեցնել գնացքը։

Նման հերոսություններ խորհրդային յերկրի յերեխաների մոտ՝ յեղակի չեն։ Թերթեցեք «Պիոներսկայա պրավդա»-ն, մանկական մյուս թերթերը, և գուշ բոլոր համարներում ել կարդաք մեր մանուկների հերոսության, ստեղծագործության մասին, դուք կտեսնեք՝ ինչ անսահման նվիրածություն կագեղի խորհրդային հայրենիքը։ Դարերի ընթացքում աշխատավորության ձնշլած ընդունակությունները հնարավորություն են ստացել լրայս աշխարհ գալու Յեվ այդ աշխատավոր մասսայի յերեխաները բոլոր բնագավառներում ել արտասովոր շնորհի են հայտնաբերում։ Այն «շնորհը», վոր մինչ հեղափոխությունը միայն և միմիայն տիրող գասակարգին եր վերասպահվում, այսոր այլ ևս զագարել և մենաշնորհ լինելուց և դարձել և մասսաների պատվի գործը։

### 3. ՇՐՋԱՊԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր յերեխաների դաստիարակության գործում խոշոր գեր և խաղում միջավայը։ Յեթե մի կողմից պրոլետարական և կոլտընտեսական կազմակերպված շրջապատը, խորհրդային կարգապահությունը, հասարակական կյանքը, կուլտուրական նոր վերելքը և նոր կենցեղը բարենպատ ազգեցություն են ունենում մեր յերեխաների դաստիարակման վրա, մյուս կողմից՝ մենք մինչև որս շատ համախմբագում ենք նաև մի շարք բացասական յերեւյթների, վորոնք քայլեցայիշ ազգեցություն են թողնում մեր յերեխաների վրա։ Այդ բացասական յերեւյթները մեծ մասմբ սկիզբ են առնում և անվում են դասակարգային թշնամի տարրերից։ Դեռևս կան ճին ճոգերանություն ունեցող մեռնող դասակարգի մասցորդներ, վորոնց մեջ արմատացած են կատարակիզմի հետքերը, անհոգատար վերաբերմունքը գեղի պետական սեփականությունը, գըռ-

փողական ձգտումները և աչքակապությունն աշխատանքի մեջ։ Կան մեզ մոտ նաև ընտանիքներ, վորտեղ դեռևս կան նացիոնալիստական և կրոնական տեսդենցները։ Մեր կենցազուավորությունը ընտանիքներում դեռ խսպառ չեն վերացվել հարբեցողությունը, կովարարությունը, կեղոտառությունը, սանձարձակությունը, մեշշանական ձգտումները, անվայիլ և սրիկայական վերաբերմունք դեպի մի ուրիշը, խուլիգանական արարքներ անգամ, ահա անիծյալ անցյալի խայտառակ մնացորդները, վոր մերթընդմերթ հանդես են գալիս։ Այդ՝ յերեւութները, ճշմարիտ ե, սակավ են, բայց դեռ վոչնչացված չեն։ Յերեան են գալիս փողոցում, ընտանիքում, կինոյում, թատրոնում, նույնիսկ դըպոցում, և գլխավորն այն ե, վոր այդ բոլորն անկասկած ազդում են յերեխաների գաստիարակության վրա։

«Պիոներ կանչ»-ի այս տարվա №13-ում տպված ե, վոր Վաղապատի շրջանի Արշալուս գյուղի պիոներ կոլվար Պահետը միշտ խըմաւ ե, յերեխաների մեջ վատ սովորություններ և տարածում, մի քանի պիոներուհիների վատ բովանդակութամբ նամակներ և գրել։—Միթե այդ խուլիգանություն չե։

Նույն «Պիոներ կանչ»-ի 1934 թ. №-57-ում «Պիոներ կանչ»-ի բրիգադը գեկտեմբերին կատարած իր հետազոտությամբ նարդուսի անվան դպրոցում հայտնաբերել և մի շարք խուլիգանական տարրեր, վորոնք թունավորում եցին մեր յերեխաների միջավայրը։

Աշակերտներին ծեծելու, ահարեկելու և դասերը խանգարելու փաստեր ել կան, վորոնց հեղինակները նույն «հերոսներն» են։

Դրանք այնպիսի փաստեր են, վորոնց կողքից չի կարելի սասնասիրտ անցնել։ Դպրոցի վարչությունը գիմնել և միլիցիայի ոժանդակության։ Սակայն միայն միլիցիան, առանց հասարակայինության, չի կարող վերացնել ալդ բացասական յերեւութը։ Խորհրդային հասարակայինությունը, ծնողները, դասատոնները, պիոներական և կոմսոմոլի կազմակերպությունները բոլորն ել պետք և պայքարեն կազմալուծող նման գեղքերի գեմ։

Այդպիսի յերեւութներ ելի յեղել են։ Կան զեղքեր, յերեխան փողոցում ընկնում ե սպեկուլյանաների, նախկին կուչակների և խուլիգանների ազդեցության տակ։

#### 4. ԾՆՈՂՆԵՐԸ ՅԵՎ ՅԵՐԵԱՆԵՐԸ

Տաս տարեկան Համոն դպրոցից վերադառնալուց հետո, տանը մարդ չինելու պատճառով, հաճախ վազում եր փողոց՝ խաղալուց ընտանիքում վոչ մի հսկողություն, վաչ մի դաստիա-

բակչական աշխատանք չեր տարվում նրա վրա։ Յերեխան այդ բոլորից հետո սովորեց գողանալ, ծխել խարել, և զարձալ վերին աստիճանի կոպիտ։ Յեթե ընտանիքում չկա կարգ ու կանոն, կազմակերպվածություն, յեթե յերեխայի մոտ մեծերը կը ուղարկում են, հայնոյում, կոպիտ են վերաբերվում իրար հետ, կոպիտ են վերաբերվում յերեխայի հետ, բնականաբար այդ բոլոր հատկություններն անցնում են յերեխային։ Յերեխան նույնպես կոպտանում ե ու դառնում անկազմակերպ։

Կատարյալ խուլիգան ե, յերես և առել ու վոչ վոքի չի լսում, ծխում ե, հայնոյում։ Վարտեղից են այդ խուլիգանական սովորությունները։ Ֆանգատվում ե Համորի մալրը, Համոն իրոք և ծխում ե, և հայնոյում ու ծնողներին կոպիտ պատասխաններ և տալիս։

Գետք և միշտ նկատի ունենալ, վոր յերեխան շատ բան սովորում և ծնողներից կամ շրջապատողներից։ Շատ յերեխաները ընտանիքում վոչ միայն ընտանեկան վեճեր, կշտամբանքներ են լսում, այլ նույնիսկ ականատես են լինում ծեծի և հայնոյանքի։ Հարկավ այդ ամենը չի կարող բացասարար չանդրադանալ յերեխայի բնավորության և սովորությունների վրա։ Մեծահասակներից շատ քչերն են դրսում հետեւում, վոր յերեխաների նկատմամբ այս կամ այն խուլիգանությունն անողին միլիցիային հանձննեն։

Դեպի փոքրիկը, գեպի յերեխան հաճախ խնամքով վերաբերմունք չի լինում։ Նույնիսկ լինում են դերքեր, յերե գոտնահարվում են յերեխաների իրավունքները, մինչդեռ մեր որենքները, մանավանդ վերջին որենքը սպեկուլացիայի և մանուկներին այլասերող արարքների դեմ, պարունակում են մի շարք կանխիչ միջոցներ։ Սակայն անհրաժեշտ ե, վոր յուրաքանչյուրքաղաքայի այդպիսի գեղքերում կարողանա այդ իրավագանցներին հանձնել խորհրդակին դատարանին կամ միլիցիային։

Խորհրդային յերեխում, վորտեղ տնտեսական հեղաշրջման հետ զրվում ե նաև մարդկանց վերադառնատիարակության, հին հոգեբանությունը փոխելու խնդիրը, պարզ ե, վոր մեր շրջապատը պետք և հանդիսանա դաստիարակությանը նպաստող Փակտորներից մեկը։ Անմտություն կլիներ, յեթե մենք մեր շրջապատը, մեր հասարակական կյանքը, մեր այսորվա փողոցը հա-

մեմատության մեջ դնելինք մինչ հեղափոխության զրջանի—ցաւ բական ու դաշնակ իշխանության որոք գոյություն ունեցող կյանքի ու զրջապատի հետ, յերբ մառակերն ու մարակը, աշխաւ տողների շահագործումը, առևանդումը, ալան-թալանը, գողությունն ու ավաղակությունը կազմում եյին տիրող կարգերի «սրբազն» հիմքերը. Մեր հասարակական կյանքի դաստիարակ կիչ ազգեցության, մասին մենք վերևում խոսեցինք. նայեցնք մեր փողոցը—հեղափոխական յերթեր, պիոներական շարքեր, նոր կառուցվող հոյակապ զենքեր, հեղափոխականների արձաններ, մանկական հրապարակներ, ծաղկանոցներ և այլն, և այն գրանք բոլորը նպաստում են մեր յերեխանների դաստիարակության գործին, դրանք բոլորը շարժում են մանուկ սերնդի վառ հույզերը, ոժանդակում են կողեկտիվ դաստիարակությանը, կուլտուրական նոր կյանք ստեղծելուն:

Խորհրդային յերկրի յերեխան ամենակուլտուրական յերեխան ե, վօրովհետև թե կուսակցությունը և թե իշխանությունը տվել են այդպիս լինելու բոլոր նախադրյանները. Սակայն այս տեղ նույնպիս դեռ կան վորոշ բացեր, մեկ ել տեսար մերթ ընդ մերթ յերեխան յեկալ այս կամ այն անկուլտուրական յերեւյթը, վորի պատճառը նույնպիս հին սովորությունների մնացորդներն են—հայհոյանքը, ծեծը, յերեխանների ծինը և այլն. Վորքան ել մեզ մոտ այդ յերեւյթները քիչ լինեն, բայց և այնպիս խորհը դային վողջ հասարակայնությունը պետք ե անխնա պայքարի այդ բացասական յերեւյթսերի դեմ. պետք ե աշխատի այդ գեղքերը վերացնել, վորովհետև այդ յերեւյթները բացասաբար են անդրադառնում մեր յերեխանների կոմդաստիարակության վրա:

Կոպակերատիվ թաղամասում կառուչուկինի բանվորի 12 տարեկան տղան—կոլիկ Հասրաթյանը—գպրոցում յերկրորդ հերթին եր սովորում՝ ժամի 1-ից: Ծնողները վատ ծնող չեյին, սակայն հոգ չեյին տարեկ այն մասին, թե կոլիկը մինչև ժամը 1-ը մենամենակ ինչնի ե պարապելու: Մինչև գպրոց գնալը յերեխան մենակ, իրեն ազատ զգալով՝ առանց վորևե հսկողության ընկնում ե վատ ազգեցությունների տակ: Նա ծինել և հայինուել ե սովորում: Այդ առաջադիմ կոլիկը կարճ ժամանակամիջոցում հետամը նաց աշակերտ ե դառնում: Դասառուներից մեկն այդ մասին իմանում ե և հայտնում ծնողներին ու գպրոցի վարիչին: Ծը-

նողները և ուսուցիչը կարողացան այդ յերեւյթի առաջն առնել նրանց հաջողվեց այնպիս անել, վոր կոլիկը գիտակցի իր սխալը, իր վատ վարքը: Կարճ ժամանակամիջոցում յերեխան նորից ուղղվեց, և դրանից հետո բարձրացավ նրա գպրոցական առաջադիմությունը: Թերեւս ամեն անդամ այդքան հետ չի լինի յերեխային շուտ պոկել վատ ազգեցությունից: Կոլիկի մեջ դեռև արթուն և ուժեղ եյին առողջ ծիլերը. խուլիզանական արարքները նրա մեջ դեռ ամուր արմատներ չեյին գցել:

Այդպիսի և ավելի վատթար յերեւյթներ բուրժուական «կուլտուրական» յերկրներում վոչ թե մեկ, կամ մի քանիսն են, այլ բազմաթիվ են. բանվոր կամակարգի յերեխանները Փաշիստական Գերմանիայում և այլ յերկրներում ամբողջովին մատնը ված են անուշադրության և հարկադրված են որվա մեծ մասը փողոցում անցկացնելու: Այստեղ անապաստանությունն ընդհանուր և սովորական յերեւյթն ե: Վորքան ել մեզանում յերեխանների անկուլտուրականության գեպքերը իզեակի գեպքեր լինեն, այնուամենայնիվ վոչ մի խորհրդային քաղաքացի իրավունք չունի դրանց զեմ չպայքարելու:

Այստեղ, վորտեղ յերեխանների կյանքը կազմակերպված ե, վորտեղ կա հսկողություն, վորտեղ յերեխանների համար խելացի ժամանց կա, պարզ ե, վոր այստեղ յերեխան հսկում չի ունենա վատ շրջապատի հետ մերձեցում ստեղծելու:

Ծնողները պարտավոր են ուշի ուշով հետեւ և զբաղվել իրենց յերեխանների դաստիարակության գործով, հետաքրքրվել նրանց շրջապատով: Անհրաժեշտ ե հոգ տաներ վոր յերեխանները չման անխնամ և չընկնեն վատ ազգեցությունների տակ: Ծընողները պարտավոր են հասարակական և պետական մարմիններին ոժանդակել, վոր փողոցում վերացին այդ վատ յերեւյթները: Փողոցում տեղի ունեցող հայհոյանքի, իրավախախտման, կըռպի, խուլիզանության, գողության զեմ պետք ե վճռական կերպով պայքարել, պետք ե պարագարի մեր վողջ հասարակայնությունը՝ անհրաժեշտ գեղքում զիմելով միլիցիայի ոգնությանը:

Թե փողոցում և թե հասարակական վայրերում մենք մեծ ուշադրություն պետք ե գարձնենք նաև յերեխանների դաստիարակության վրա: Յերեխանների վատ վերաբերմունքը դեպի մեծերը, իրենց ընկերները, հայհոյանքները—մեր կողմից չպետք ե մնան

առանց ուշադրության, յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի պարտավոր ե մոտենալ, հասկացնել յերեւութիւն վատ լինելը՝ նույնիսկ իմանալ զպրոցի և ծնողների հասցեները և բացիկով հայտնել այդ մասին։ Բայց մեզնից շատերն են արդյոք այդպես անում։

Յես կարծում եմ, վոր վոչ։ Ահա ինչ և պատմում ընկերու կուսամուտի տակ յերկու յերեխա իրար գոռում ու հայհոյում են, իսկ յերկու քայլի վրա մի կին ջուր և լցնում ու նրանց և նայում։ — Ընկեր, չ՞ոտեսնում. բաժանիր նրանց, — ասում ե ընկերու։ — Իմ յերեխան չի, — սառնասիրտ պատասխանում ե կինը։

Խորհրդային յուրաքանչյուր գիտակից քաղաքացի պետք և ուշադրություն դարձնի յերեխաների վարքի վրա

### 5. ԴՊՌՈՅԸ ՅԵՎ. ԸՆՏԱՆԻՔԸ

Մեղ բոլորիս հայտնի յե, թե վորքան մեծ նշանակություն ետավակ դպրոցին մեր կուսակցությունը։ Վերջին տարիներում կուսակցությունը մի շարք կարեսոր զոկումնենտներ և հրապարակել դպրոցի, ծրագրերի, մեթոդական աշխատանքների, դիսցիպլինայի և գաստիարակչական խնդիրների մասին։ Դրանք այնպիսի փաստաթղթեր են, վորոնք կարերագույն պատմական նշանակություն են ներկայացնում մեր դպրոցի զարգացման գործում և հանդիսանում են միաժամանակ վորպես ղեկավար սկզբունքներ։ Այդ տեսակի տից դպրոցին առաջադրվում են առաջնակարգ նըշանակություն ունեցող պահանջներ — պատրաստել նոր սերունդ, վորը պետք ե տա բոլշեիկյան փոխարինողներ, վորոնք պետք ե ավարտեն սոցիալիզմի կառուցման աշխատանքները։ Մեր մեծ ղեկավարն ահա թե ինչ և ասում կազմերի մասին։ «Պետք ե հասկանալ վոր մեր ներկա պայմաններում կազմերը վորոշում են ամեն ինչ»։

Դպրոցն առանց հասարակության ոժանդակության անկարող կինի լուծել այդ խոշորագույն գործը. ծնողները պետք ե նույնպես ոգնության հասնեն դպրոցին։ Մի շարք ձեռնարկություններ, ինչպես, որինակ, «Արարատ» գործարանը, «Զեթ-ռածառ» գործարանը, ապացուցել են գործնականորեն, վոր բավարար չափով ըմբռնել են դպրոցական գործի նշանակությունը, ապացուցել են իրենց նյութական ոժանդակությունը շեֆական աշխատանքով, իրենց ակտիվ մասնակցությամբ դպրոցա-

կան խնդիրներին։ Շատ բան ե արված դպրոցի նյութական բաղան ուժեղացնելու ուղղությամբ, դպրոցական լաբորատորիաներն ու կարինետները հարստացնելու գործում, աշակերտության առողջության վերականգնման գծով (ճամբար ուղարկելու, դպրոցում սանատորիաներ կազմակերպելու միջոցով և այլն, և այլն)։ Բայց այդ բոլորը չեն սպառում այն բազմաթիվ և բազմապիսի հարցերը, վորոնք վերաբերվում են ծնողներին և հասարակացնությանը։ Անհրաժեշտ ե ծնողներին ավելի խորը ներգրավել դպրոցի ամենորյա աշխատանքների մեջ, անհրաժեշտ ե, վոր ծնողները հետաքրքրվեն դպրոցի մանկավարժական աշխատանքների գրումով, ծանոթանան գաստիարակության ձևերին, հետեւ, թե ինչ և ինչպես են սովորում մեր դպրոցականները, ինչպես ե դրվագ դպրոցում յերեխաների կոմիտասիարակության գործը, ինչ են անում արտադպրոցական խմբակներում։ Կարողանան հասկանալ մեր դպրոցի նվաճումներն, ինչպես նաև մեր դպրոցի բացերը։

1935 թվի ապրիլին Յերեանի կուսականի ժողովում լուսաժողկոմ ընկ. Ա. Յեղիազարյանի զեկուցման շուջը յեղան մի շարք յելույթներ՝ դպրոցների շեֆ գործարանների և կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից։ Պետք ե անվիճելի համարել այն փաստը, վոր բանվորական կոլեկտիվները խոշոր գործ են կատարել և կատարում են մեր դպրոցների նյութական բազան և սարքավորման խնդիրները կանոնավորելու գծով։ Սակայն խնդիրն այն է, ինչպես ցայտուն կերպով դրեց ընկ. Յեղիազարյանը, վոր մեր հասարակայնությունը չպետք ե բավականանա միայն ու միայն նյութական ոժանդակության գործով։ Ենթական պարտավորությունները միայն նյութական ոժանդակությամբ չեն սպասվում։ Նյութականից վոչ պակաս մեր շեֆ ընկերություններին ու հասարակայնությանը պետք ե հետաքրքրեն նաև դասավանդման վորակը, դաստիարակչական աշխատանքների վորակը, աշակերտների առողջապահական վիճակը։

Այդ տեսակետից լժեկի ցուցադրական դպրոցը մի շարք դրական փորձեր և ձեռնարկել Ծնողները հերթու պահության կարգով մասնակցում են նախաճաշը բաժանելու աշխատանքներին, հետեւ մեր յերեխաների կարգապահությանը։ Յուցադրա-

կան դպրոցն ունի մի ուրիշ փորձ ել: Դասատուների հիվանդության գեղքերում աշակերտները չեն ուղարկվում տուն: յեթե մյուս դասատուներից ազատ ժամ ունեցող չի լինում, դպրոցի վարչությունը հրավիրում է դասավանդության դործին ծանոթ ծնողներին և աշխատանքի դնում: Ցուցադրական դպրոցը ձեռնարկում է մի ուրիշ փորձ ել—բաց անել ծնողական համալսարան, վորտեղ գլխավոր տեղը բանելու յեն մանկավարժական ոլորտագանդի խնդիրները, ընտանիքի մանկավարժականացման գործը—ինչպես պետք է վարդել յերեխաների հետ, դասերը սովորեցնելու ձեւը, յերեխայի առողջապահական խնդիրների կանոնավորումը, ինչպես պայքարել հետամմացության դեմ և այլն: Դպրոցի այդպիսի վերաբերմունքն անշուշտ բարենպատարձականք կատարելում է, կամ ի ծնողների մեջ, կփոխվի ծնողների վերաբերմունքը դեպի դպրոցը. նրանք իրենց ալելի մոտ կզգան դպրոցի շահերը և ել ավելի կհարգեն ուսուցչին, այնուհետև կփոխվի նաև նրանց վերաբերմունքը զեպի յերեխան: Յեթե դպրոցին հաջողվի ընտանիքում կուլտուրական կենցաղ մտցնել դրանով նա խոշոր գործ արած կլինի: Շատ կարեոր ե, վոր յերեխան դպրոց գնալով՝ ունենա կուլտուրական վորոշ ունակություններ, կոլեկտիվում աշխատելու ձգտում, մաքրություն պահպանելու պահանջ, աշխատելու ցանկություն և այլն, և այլն:

#### 6. ՆՈՐ ԿԵՆՑԱՎԱՐ ՅԵՎ. ԸՆՏԱՆԻՔԸ

Ծնողների մերձեցումը դպրոցի հետ՝ անհրաժեշտ ե այն իմաստով, վոր յուրաքնչյուր ծնող ծանոթ լինի, թե ինչպես են զըպրոցներում նոր զաստիարակություն տալիս, վորպեսզի ընտանիքն ել դպրոցի հետ միասին մտահոգվի աճող սերնդի դաստիարակության գործով: Ամենալավ դպրոցը, յեթե ծնողների հետ թույլ ե կապված, անկարող կլինի դաստիարակչական լայն աշխատանք տանելու: Յեվ իրոք, չե՞ վոր յերեխան դպրոցում անց ե կացնում 4-6 ժամ, իսկ մնացած ամբողջ ժամանակն ընտանիքի ազդեցության տակ ե: Այդ ազդեցությունը խոշոր հետքեր և թույնում թե դրական և թե բացասական իմաստով: Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի, վոր նա պարտավոր է պրոլիտարական պետությանը—յերեխաների դաստիարակման գործով զբաղվելու, ամեն մի կոլլեգնիկ պետք է լուրջ վերաբերվի

այդ պատվավոր պարտականությանը և բարեխղճորեն կատարի այն:

Ծնողներից վոմանք ձեզ կպատասխանեն. «Ե՞ն, մեր ժամանակն անցել ե. վմբառեղից մենք կարող ենք նոր ձեռվ դաստիարակել»: Այն, վոր մեր մեջ զետ շատ բան կա հնից, այդ ձիգությունը սակայն որեցոր այդ հինը նվազում ե, և մեր արագընթաց կյանքը շատ բան է փոխում մեր մեջ: Աշխատելով իրենց կուլտուրական մակարդակը բարձրացնելու վրա, ինքնաղաստիարակչականից գծով ամեն մի ծնող պարտավոր է հետեւ, վոր իր յերեխան, կամ հարեւնի յերեխան, ընկնեն թշնամի տարրերի ազդեցության տակի մեր ապագա սերունդը պետք է նոր վորով դաստիարակվի՝ տառանց մեջանական և խորթ սովորությունների:

Այս տեսակի այսպիսի անհրաժեշտ է, վոր ընտանիքի անդամների փոխհարաբերությունները նոր կենցաղի հիմքերի վրա զրված լինեն: Խորհրդային ընտանիքը միանգամայն տարրերվում է բուրժուական ընտանիքից: Ահա ինչ ե զրված «Պրավդա»-ում ընտանիքի մասին, 1935 թ. հունիսի 26-ի ասածնորդողում. «Խորհրդային յերկրում ընտանիքը լուրջ և մեծ գործ ե»... Այսուհետեւ խոսեցով այն մասին, վոր խորհրդային ընտանիքը, նրա կենցաղը միանգամայն տարրերվում են բուրժուական ընտանիքից և կենցաղից, նույն տառաջնորդողում զրված ե. «Ակնառու կերպով ցույց տալու համար, թե ինչպիսի հեղափոխություն է տեղի ունեցել մեզ մոտ ընտանիքան հարաբերություններում, բավական և համեմատել կոլտնտեսականի ընտանիքում կնոջ ունեցած դրությունը մինչեղափոխական զեղջկուհու դաստիարակության մասին կապահանգիր այնպիսի գյուղացիի, վոր չծեծեր կնոջը: «Ծեծիր կնոջդ մինչև յերեխան ունենալը, իսկ յերեխաներին՝ մինչև մարդ դասնալը»—այսպիս ե ասում քիչ թե շատ լիբերալ առաջը: Բայց ավելի հետո յեր գնում մի ուրիշ ասած. «Ծեծիր կնոջդ ճաշի դեմ, իսկ ընթրիքի ժամանակ—կրկին, առանց ծեծի սեղան մի նստի»: Այսպիս եր մինչհեղափոխական այն կենցաղը, վորը բյուրեղացել եր «իմաստուն» առածներում: Այժմ կոլտընտեսուհիները բարձրածայն կծիծագեն միայն, յեթե մեկն այդպիսի բան ասի նրանց: Պարզ ե, վոր բյուրժուական հարաբերությունների անհետացումով պետք է փոխվեր նաև ընտանիքան կյանքը, այդ կյանքը պետք է նոր ձեւ ընդուներ, այնպիսի ձև:

Վորը համապատասխաներ սոցիալիստական հասարակակարգ կառուցողի հոգեբանությանը: «Սոցիալիզմը—այդ հոգատարությունն է մարդու մասին և ազգաբնակության արագ աճում ե»: Նոր, սոցիալիստական ընտանիքից պահանջվում է լինել հոգատար դեպի ընտանիքի անդամները, դեպի իր ընկերները, դեպի հասարակական գույքը: Նույն առաջնորդողում «Պրավդա»-ն գրում ե:

«Դիտակից պրոլետարը միշտ մեծ հարդանքով և պատասխանատվությամբ ե վերաբերվել իր ընտանիքին՝ կնոջը, յերեխաներին, հորը և մորը: Միմիայն բուրժուական պորտաբույժների և փափկասուն զավակներին ե սազում թեթևամիտ և լոյիր վերաբերմունք ցուցաբերել դեպի կինն ու ընտանիքը: Լավ վերաբերմունք ունենալ դեպի ընտանիքը՝ նշանակում ե կատարել իր պարտականությունը: Ընտանիքին վատ վերաբերմովը չի կարող լինել նաև խորհրդային լավ քաղաքացի, հասարակական աշխատող: Բուրժուական հասարակության մեջ ընտանիքը, ինչպես և այդ հասարկությունն ինքը, հիմնված ե տնտեսական անհավասարության վրա, ստրկության վրա, իսկ ստըրկությունն անհամատեղելի յե վեհ զգացմունքի հետ:

Ցերեխաների դաստիարակության գործում ծնողների առաջին խնդիրը պետք է լինի այն, վոր կարողանան առողջ վերաբերմունք ստեղծել դեպի յերեխաները, կարողանան մտերմական հարաբերության մեջ մտնել նրանց հետ: Այդ հիմնական գրավական և հանդիսանում գաստիարակչական աշխատանքները լավ տանելու համար:

Դաստիարակչական այգային վերաբերմունքը կստիպի ծնողներին ակամայից պահանջկոտ լինել նաև դեպի իրենց. նրանք ամեն կերպ կաշխատեն անձնական որինակներով ներգործել յերեխաների վրա: Խորհրդային յուրաքանչյուր քաղաքացու, մասնավորապես ծնողների մանկավարժացման խնդիրը մեծ կարելուրություն ե ստանում մեր որերում, յերբ դրվում ե նոր կույտուրայի, նոր մարդու հարցը: Ծնողները պարտավոր են ծանոթանալ մանկավարժական գրականությանը, կարգալ մանկավարժական բրոյալ բարեկամությունը, այդ մասին զրույց ունենալ ուսուցիչների հետ, պիոներ դեկավարների հետ, լսել նրանց կարծիքը յերեխայի մասին, լսել նրանց կարծիքը, թե ինչպես պետք ե վարվել

այն գեղագում, յերբ յերեխայի մեջ յերեան ե յեկել այս կամ այն բացասական գիծը:

Ընտանեկան դաստիարակության հաջող ընթացքն առաջին հերթին և առավելապես պայմանավորվում ե յերեխայի և ծընողների միջև ստեղծված հարաբերությունների բնույթով: Այդ հարաբերությունները պետք ե լինեն այն աստիճան մտերմական և բարեկամական, վոր յերեխան անկաշկանդ կերպով և միանգամայն անկեղծ, ինչպես իր ուրախություններին, այնպես ել տիրություններին մասնակից անի նաև իր ծնողներին, վոչինչ չթագցնելով նրանցից: Դրա համար հարկավոր և հոգատար վերաբերմունք ունենալ դեպի յերեխաները: Միանգամայն պարզ ե, վոր յերբ յերեխան անկեղծորեն հայտնում ե, թե ինքը զըպցոցում վատ թվանշան ե ստացել, կամ թանաքամանը գցել, կոտրվել ե, յեթե ծնողները յերեխային այդ դեպքում ծեծեն կամ կաշտամբեն, յերեխան կդադարի նրանց ճիշտ ասելուց, ամեն անգամ կաշխատի թաղցնել իր ապրումներն ու տպակորությունները: Շատ հաճախ ե պատահում, վոր նման դեպքերում ամենաչիշտն բանի համար, վորի մասին յերեխան անկեղծաբար խոստովանում ե, ծնողներն սկսում են ջղայնանար: Ընդհանրապես թե ծնողներից և թե դաստիարուներից պահանջվում ե առաջին հերթին չջղայնանար, վորովհետև այդ ջղայնությունն արագ կերպով անցնում է յերեխաներին:

## 7. ԾՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴՊՐՈՑՅԱԿԱՆԻ ՀԱՍՈՒԱՑՄԱՆ ԵՐՉԱՆՈՒՄ

Վերին աստիճանի կարենը և այդ անկեղծ ու անկաշկանդ փոխհարաբերությունը ծնողների և յերեխաների միջև՝ յերեխաների հասունացման շրջանում (12-15 տ.): Այս շրջանում յերեխաների մեջ ծագում են մի շարք հուզով հարցեր: Կարենը ե, վոր յուրաքանչյուր ծնող հասկանա, թե ինչպես պետք ե վարվել յուրաքանչյուր դեպքում՝ յերեխայի հետաքրքրությունը բավարարելու տեսակետից: Ցեթե դեռահասն իրեն հետաքրքրությունը հարցերի պատասխանը ծնողներից չստանա, կամ յեթե նա չըվստանա դիմել ծնողներին այդ հարցերի մասին, բնական ե, վոր նա կաշխատի պատասխանն ստանալ ուրիշներից, հաճախ սխալ յեկնաբանություններով՝ գայթակղեցուցիչ ձևով, կողիտ և այ-



անդակ յեղանակով։ Այդ հասակում գրեթե բոլոր գեռահասներին սեռական հարցը հուզում է, և այդ հարցի սխալ լուծումը նրանց կարող է գլորել ունանիղմի գիրկը։

Այդ հասակում ծիծաղելի կլինի գեռահասին տալ այն բացարությունը, վոր հաճախ ընտանիքում տալիս են 5-8 տարեկաններին, թե՝ «Սեղիկին արագիլը բերեց իր թերերի վրա», «Պետիկին գետից հանեցինք» և այլն։ Յերեխաները ծանոթ են կենդանիների բազմանալուն — կովը ծնեց, ձին ծնեց և այլն, և այլն։ Այդ բոլորի մասին առողջ ձեռվ յերեխան կարող է իմանալ ծնողներից։ մանավանդ վոր այդ մասին նա սովորում է նաև դպրոցում — կենդանաբանության, բուսաբանության և բնախոսության դասընթացից՝ կենդանիների և բույսերի բեղմնավորման և բազմացման մասին։ Ծնողը բացատրում է, վոր շեղումները միշտ ֆնասում են։ Պարզ է, վոր այդպիսի խոսակցությունները պարբերական բնույթ չպետք է կրեն։ Կարեռն այն է, վոր այնուհետև հնաբավոր լինի առողջ զբաղմունք տալ յերեխային։ Միշտ պետք է ժամանակ գտնել, թեկուզ մեկ ժամով, զբուանք, բարձրածայն ընթերցանություն, խաղ և այլն կազմակերպելու։ Ֆիզկուլտուրան ալս տեսակետից նույնպես անհրաժեշտ միջոցներից մեկն է։

Մինչ յերեխայի հասունացման շրջանը պետք է ժամանել նաև յերեխայի սեռական դաստիարակության մասին։ Այդ շըրջանում պետք է գործադրել ընդհանուր կանխիչ միջոցներ։ Դրանցից առաջինը յերեխայի վողջ մարմինը մաքուր պահեն է։ Դեռ վաղ մանկական հասակից պետք է յերեխային հաճախ լողացնել, մաքրություն պահպանել։ Այնուհետև ուշադրություն պետք է դարձնել վոր յերեխայի զգեստները նրա մարմնի սեռական որգանների սփերայում ափելորդ շփումներ չառաջացնեն։ Յերեխաներին յերբեք չպետք է վոգելից խմիչքներ տալ Ավելորդ գուրգուրանքները նույնպես վնասակար են։ յերեխային պետք է փայփայել, սիրել խնամքով շրջապատել, բայց այդ բոլորը պետք է առողջ հիմքերով տանել, առանց ափելորդ քաղցրու վատ շարժուձերի։ Ամուսինները շատ հաճախ չեն ուզում նըկատած լինել յերեխային ներկայությունը, և որանց մոտ իրենց այնպես են պահում և այնպիսի վարմունք թույլ տալիս, վորը չպետք է տեղի ունենա յերեխայի ներկայությամբ։ Էնդհանաբառեկու

ընտանիքում վարմունքները պետք է դրված լինեն առողջ հիմքերի վրա։ Նրանք յերեխայի մեջ կամկածանքներ չպետք է ծնեն։ Ամուսնական մի շարք փոխհարաբերություններ յերեխայի տեսողության առարկա չպետք է դառնան։

#### 8. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԼԻՆԵՆ ԾԵՌՎՆԵՐԸ

Մեզնում թե քաղաքում և թե գյուղում տարածված է, կամ ավելի շուտ՝ տրավիցիոն սովորություն ե դարձել այն կարծիքը, թե յերեխաների դաստիարակության գործն ամրողջովին ընկնում և մոր վրա, իսկ հօր պարտականությունները սահմանափակվում են միայն և միմիայն ապրուստի միջոցներ հայթայթելու մեջ։ Կրկնում ենք, վոր հայրերի այդպիսի կարծիքը սխալ է։ Հաճախ այդպես կարծող հայրերը փորձում են արդարացնել չունեցող մեջ, Այդ ել միշտ չե։ Ցուցաբրական դպրոցում ծնողների ժողովում մի շարք հարվածային աշխատողներ կեկուցներն, վոր նրանք կարողանում են որական 1-և կես ժամ նվիրել հատկապես յերեխաներին։

Այդ տեսակետից շատ ուսանելի յե մեր մեծ ուսուցիչների՝ Մարքսի և Լինինի վերաբերմունքը դեպի յերեխաները։

Յես կրերեմ ձեզանից շատերին հայտնի՝ Լիբկնեխտի գրածը Կարլ Մարքսի և յերեխաների մեջ հաճախ տեղի ունեցող խաղերի մասին։ Այդ մասին հոդվածներ յեղել են նաև մեր նախկին դասագրքերում։ Հոդված կա նաև «Պիտոներ կանչ»-ում (№14, 1935 թ., մարտի 12): «Մենք յերեմն ձի-ձի եյինք խաղում։ յես մեջը իսի եյի ասենում Մարքսի աղջիկներից մեկին, նա՝ մյուսին, և սկսում եյինք վազ տալ Մի անգամ կոնդո՞ր յեղած ժամանակ յերեխաները մտածեցին «Մարքսին» (այդպես եյին անվանում ընտանիքում Մարքսին) հանրակառք դարձնել։ Նա (Մարքսի աղջիկը) բարձրացավ կառապանի տեղը, այսինքն «Մարքի» ուսերին, իսկ ենդեւս ու յես դարձանք ձի։ Մեզ իսկապես լծեցին և սկսեցին մի վայրենի արշավ։ «Մարքին» այնպիս եր շող ընկել, վոր քրտինքը հոսում եր նրա ձակատից։

Յեկ այդ մեծ մարդը միշտ ժամանակ գտնում էր յերեխաների հետ զբաղվելու, համաշխարհային հարցերով զբաղված փիլիսոփան այդքան մեծ նշանակություն եր տալիս յերեխաների ժամանցին։ Ահա ինչ է գրում իր հիշողություններում Մարքսի

աղջիկը՝ Ելեոնորա Մարքու Եվելինզը. — «Մարքսից լավ ընկեր յերբեք յերեխաները չեյին ունենում։ Հեքիաթներ պատմելու մեջ նա միակն եր, Մավրոս սովորություն ուներ նաև յերեխաների համար բարձր կարդալ։ Նա իմ քույրերին, ինչպես և ինձ, կարդացել եր Հոմերոսն ամբողջովին, «Նիբելունգների յերգը», «Դուռ Քիշոտը», «Հազար ու մի գիշերները» և այլի։ Կարդալիս և զրուցելիս Մարքսը բացատրում եր, թե ինչպես պետք է գըրքերում գտնել գեղեցիկն ու լավը, նա սովորեցնում եր մտածել և հասկանալ։»

Այդ որինակները ցույց են տալիս այն, թե ծնողներն ինչ-պես պետք ե լինեն: Ծնողները վորքան ել զբաղված լինեն, այնուամենայնիվ միշտ ել կարող են հնարավորություն ստեղծել վորոշ ժամանակ հատկացնել յերեխաներին: Այնպես վոր ծնողների զբաղված լինելը չպետք է յերեխայի կորստյան պատճառ դառնա: Որական մեկ ժամ յուրաքանչյուր ծնող կարող է նրա վիրել հատկապես յերեխաներին: Յուրաքանչյուր ծնող, վորքան ել զբաղված լինի, նա չպետք է մոռացության տա, վոր մեր խորհրդացին հայրենիքը շատ սպասելիքներ ունի մեր աճող սերնդից: Այդ սերունդը պետք է կոմունիզմ կառուցի: Նա պետք է աշխատի ամենառաջավոր և զարգացած տեխնիկայի պարմաններում: Զարգացած տեխնիկա ստեղծելը, տեխնիկային տիրապետելը, և բարձրորակ կադրեր ստեղծելը սոցիալիզմ կառուցելու հիմնական պայմաններիցն են:

Զաբարանց խոշոր դեր և ընկնում դպրոցի վրա՝ կադրեր պատրաստելու գործում, այժմ մեր տնտեսության մեջ, ինչպես և մյուս բնագավառներում, վորոշող դերը պատկանում և կադրերին. աճեցնել այդ կազմերը, հոգ տանել նրանց մասին, համաձայն ընկ. ԱՏԱԼԻՆԻ պատգամների, — դպրոցի աւաշնակարգ պարտականությունն և այդ:

Յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի, գիտակցելով դպրոցի վրա դրած խոշոր պարտականությունները, պարտավոր և ոժանդակի ղպտոցին, վորպեսզի վերջինս կարողանա կենսագործել իր պատվավոր կոչումը։ Զե՞ս վոր մեր դպրոցը բոլորովին նման չե մինչնեղափոխական ցարական դպրոցին։ Խորհրդային դպրոցում կրոնական և իդեալիստական այլ գիտելիքների փախարեն խոկական գիտություն և արվում։ Մեր դպրոցական բուհը գիտությունները սովորում են գիտակցաբար՝ հասկանալով,

ըմբռնելով գրառթյունների հիմունքները։ Այդ ժաման ծնողները լավ պետք ե խմանան։

Ծնողները պետք ե հետաքրքրվեն, թե ինչ և արվուս գըպ-  
ըցում. հարցնեն յերեխաներից ինչ են սովորում, ինչ խընդիր-  
ներ են մշակում, այդ մասին խոսեն դաստիարակների հետ: Կավ-  
դրագիտ ծնողները պետք ե ծանոթանան ծրագրերին և դասազըլ-  
քերին:

Այնուհետև անհրաժեշտ ե ընտանիքում յօրինակը և  
մար ստեղծել պարապելու հարմարությունները Եերիխան պետք  
ե ունենա իր անկյունը—պարապելու, գրելու հարմարություն-  
ները, վրապեսզի նա հնարավորություն ունենա կանոնավոր և  
հանդիսատ կերպով պարապելու։ Պարապելու ժամանակ պետք  
է խուսափել աշակերտին այս կամ այն տնային գործը կատարել  
տալուց, կամ վորևս բանի ուղարկելուց, վոր թերևս ընտանիքի  
մի ուրիշ անդամը կարող է կատարել հենց այդ բռնկյին։

Դեռ փոքր հասակից յերեխային պետք և սովորեցսով զանոնավոր աշխատել ճշտապահ լինել, ժամանակին դասերը պատրաստել, ժամանակին շորերը մաքրել, լվացվել, տատամները մաքրել, սանվել, ժամանակին դպրոց հաճախել, դպրոցից անմիջապես տուն վերադառնաբ կանոնավոր ռեժիմը նրա համար պահանջ պիտի դարձնել

Հաճախ պետք է հետաքրքրվել, թե ինչ վիճակում սո սրա տեսրերը, գրքերը և ուսումնական մյուս պարագաները:

Ընտանիքում անհրաժեշտ ե կանոնավոր հիմքերի վրա դասել  
աշակերտի դասերը սովորելու գործը: Այս ծնողները, վորոնք  
բավականաչափ պատրաստություն ունեն, պարտավոր են հետա-  
քըրքը լազարի աշակերտին տված դասերով, այնուհետև հետամուտ լինել  
թե ինչպես ե նա դասը պատրաստում, ոգնել, բացատրել, յերբ  
աշակերտը դժվարանում է: Բացի ծնողներից՝ այդ գործում ո-  
ժանդակություն կարող են ցույց տալ բարձր դասարանների  
(8, 9 և 10) և տեխնիկումների ուսանողները, յեթե այդպիսիք  
կան ընտանիքում: Փորձերը ցույց են տալիս, վոր իրենք՝ աշա-  
կերտներն ել բավականաչափ հետաքրքրվում են, յերբ դասերի  
մասին զրուցում են նրանց հետ: Որինակի համար՝ կարելի յի-  
պատմել ծնողներին ֆրանսիական հեղափոխության մասին  
հյուսիսային ժողովուրդների կյանքից, բացատրել Պատկալի

Արթիսեդի որենքները, թվաբանական զանագան հաջուռման կատարել, տոկոսներ հաշվել, կոտորակներով խնդիրներ լուծել, թվաբանական հանելուկներ ասել.—այդ բոլորը յերեխաները մեծ հաճույքով են անում. այդ միևնույն ժամանակ աշակերտին համոզաւմ ե իր գիտեցածի մեջ, նրա մեջ ամբապնդում ե վստահություն և սեր զեպի գիտությունը. Պարզ է, վոր այդպիսի աշակերտը դասարանում վստահորեն կպատասխանի իր դասերը: Հետևել, վոր աշակերտները դասերը սովորեն, ցույց տալ նրանց, թե ինչ պետք ե անեն, սովորեցնել նրանց դասերը,—այս բոլորը մտնում են ծնողների պարտականությունների մեջ: Սակայն այդ չի նշանակում, վոր աշակերտը չպետք ե ինքնուրույն կերպով իր դասերը սովորի. այդ ինքնուրույնությունը կապված է տարիքային առանձնահատկությունների հետ: Ստորին դասարաններում, յերբ աշակերտը դեռ նոր ե դպրոց հաճախում, նրա ինքնուրույնությունը սահմանափակ է. այնուհետև քանի բարձրանում ենք դեպի վերին դասարանները, աշակերտն ավելի մեծ չափով ե ինքնուրույնություն ձեռք բերում: Բայց և այնպիս ցածր տարիքից հենց անհրաժեշտ ե յերեխաների մեջ զարգացնել տոկունություն և աշխատանքը հաղթահարելու համառություն: Յերբ մենք ասում ենք՝ հետաքրքրվել աշակերտի դասերով, ոժանդակել նրան, այդ չպետք ե հասկանալ, վոր իրը թե տմեն մի փոքր դժվարությունից ստիպված և առանց համառ աշխատանքի աշակերտը պետք ե վագի ծնողի մոտ, վորպեսզի պատրաստի պատասխան ստանա: Այդ նույնպես վտանգավոր և այն տեսակետից, վոր յերեխայի մեջ չի զարգանում աշխատանքի ընթացքում հանդիպած դժվարությունները հաղթահարելու տոկունություն ու համառություն: Կարեսը վոչ թե ծնողի տված պատրաստի պատասխաններն են, այլ բացատրությունները, գլխի զցելը, աշխատելու ձերին սովորեցնելը: Շատ հաճախ այս կամ այն հարցի մասին բավական ե միայն ակնարկել յերեխան ինքն արդեն ի վիճակի յի ինում շարունակելու իր սկսած գործը, յերեխան ինքնուրույն կերպով ընկնում ե ձիշտ հունի մեջ: Այս դեպքերում ինքնուրույնությունը կարելի յի արդեն առանովված համարել:

Շատ վատ են վարդում այն ծնողները, վորոնք աշակերտի տնային աշխատանքներն իրենք են կատարում—ինդիրները լու-

նում են, զարադրությունները գրում են և այլն. այդպիսի ծընողներ կան:

Հարեւանիս 10 տարեկան աղան (2-րդ դասարանի աշակերտ և) մի քանի անգամ «Պիոներ կանչ»-ի վիկտորինաներում բոլոր հարցերին «պատասխաննել» ե—աշխարհիս ամենամեծ գետը վիրն ե, ամենաբարձր սարը վրբն ե և ալին: Բանից դուրս ե գալիս, վոր վոչ միայն Միսիսիպի գետի մեծության մասին չգիտե նա, այլ չգիտե նույնիսկ, թե այդպիսի գետ կա:

Ընդհանրապես պատրաստի պատասխանները վոչ միայն չեն ոգնում յերեխաններին, այն նույնիսկ մեծ վաս են հասցնում. յերեխան, ամենաչնչին՝ դժվարության հանդիպելով, խեղճանում ե և անկարող և լինում ինքնուրույն կերպով հաղթահարել այդ դժվարությունները: Այստեղ կա նաև մի ուրիշ կարեւոր հանգամանք. այդ այն ե, վոր յերբեք յերեխաններին չպետք ե սովորեցնել մտավոր «ծուլության» անհրաժեշտ և ուղղություն տալ նըրանց մտածելակերպին, դժվար գեղքերում միայն տալ անհրաժեշտ բացատրություններ: 3-րդ դասարանում սովորող յերեխան դժվարանում ե լուծել հետեւալ խնդիրը: «Վերջան վճարեցին 15 կիլոգրամ կարտոֆիլին և 25 կիլոգրամ կաղամբին, յեթե կարտոֆիլի կիլոգրամը արժե 75 կոպեկ, իսկ կաղամբինը՝ 90 կոպեկի»:—Հայրիկ, չեմ կարողանում խնդիրը լուծել, —դիմում ե յերեխան հորը:

—Մի բեր տեսնենք!—Հայրը կարդում է խնդիրն ու սկսում ն լուծել:

—Դե վերցրու, լուծեցի:—Յերեխան տանում ե և արտագըրում: Ծնողը գրանով գրեթե վոչինչ չուվեց յերեխային: Բայց այդ դեռ քիչ ե:—յերեխան այդպիսով կսովորի ծուլանալ կդադարի ինքնուրույն մտածելուց: Նույն խնդիրը մի այլ ծնող այլ կերպ կբացատրի: Կկարդա յերեխային խնդիր պալմանը և հարց կտա՝ վրբան են տվել 15 կիլոգրամ կարտոֆիլին՝ առանձին: Հետո, վրբան են տվել ամբողջ կաղամբին՝ առանձին: Հիմա ինչ կարող ենք իմանալ: Այս դեպքում խնդիրը լուծողը յերեխան ե. ծընողը միայն ուղղություն ե տալիս:

Դրանով չի վերջանում: Ծնողը նույնանման մի խնդիր ել տալիս ե, վոր յերեխան միանգաման ինքնուրույն լուծի:—Աշակերտը գնեց 15 տետր և 12 գունավոր մատիտ: տետրի հատն արժե

• Թվիայտու նևո մստի վր աչղ  
ողաջմուստմզի տիկոսը  
ուղգովգիզմի մմզի յրակորտոց նշզմզ քոյիներո զվմզովմզմիսումզզ  
մմզմուխոմ վ-«նզիսլվարու մզրմոհ ովբարմա ովբարմա աշոտմա ովտի  
-տեսու վրեասմատու ով/նտոնմչմասոյ իսենմզի հվեզեկն առօ  
ովլու դ օյրեափսմատու զիսովտու վզմովսմոցզ-մզվմ  
-պիկտոցետ մովմզմձմզ ոտկուսրմամ ովտ ով նու ովիսուսամ  
մրեափսմատու զվիտոնմչմասոյ մաի ովտոյրի զ ժտովու մմզովզմզ  
-զօ մովոյթտեմտե վմզովտիտետե վրեափսմատու զվիտոնմչմասոյ ո  
վմզովզմիոց ոտկոտովմա զզր վմզովովզմզ լուտ զ ժտովու նզո  
զզր յրաժվոտու զօ ո յրամսմեն զօ նվտզիտոզտ ովզ  
• դումժառափոյզգանոց յվեռևացան (տ  
• մմզովզոցյու վլու  
-սյ ոտկոտովմուսիսի լզու զ ժտովու յրաժյրի վեռենզի մազ  
ով ովումնովտոզ ոբրաետմադու ովմթյուկուտիստ վեն  
-ոտե վմովզմզ մետեզգի ոտկոտովլուվիտոս մոյսմթյուտիստ վեն  
-տենզի ձնսստ եվտպկոտոզ ովզ մմզովունթյունսքմս ևսզմումզի  
-մէ ովուզ ովմսպուկունթյուզ զօ ո մմզովունթյունմուց ոտկոտ  
-վրոյու քտենզուս տու վեովու մզր զօ ոզ յանսստ տմի վիտովզմզ  
ո լովու ննզ յրամմմմտոց վի ովուզ մքտյմտատու յրատաետցմէ  
մաի յրեսի վր ո քտառու սու ովովզմզ մաի ո յրամիթ եզր ոցզմ  
-մզօ յրամզմումզի լու վի ովետոնթյուզ ովուզ մզրանթյունսքմս յրոկ  
մոյսմթյունիտոսով լուիտ մմզի ովլու մոյզ յրախետմե ովետոկտոց  
տպց ենումզ մոյզ մմզի հիտոյրոտ ովլու ովովզր չսի ոզ յրամսոխ  
-սո ովու տու ենզտեզր մմզովովզմզ ով ովզենզտու նտեզցի մազ  
յրաժվոյտովմ լու ովկոր ենմզովոյորմտուտովու ոտկոտցի ունզու տմի  
մմզժյրի տուվց մոյսմթյուկուտիտովու վմովզմզ յրամզտոց

ԵՐԳԱՎՐԱԿ ՎՆՊՑԵԿԻ 6.

„ժղող կը ուղարկեած է զիշտ պատուի մայր ժանյա մսի գ բակալու առնձիւ Ամենազ նևտ փքան զտովզազ զթղց պիքանի զո՞թուկուն պարս վկապակնի զդմսի հզտատ ոտովզազ ատզ հզմսափ վմնզով զվիշտատ զմնզով նմանիւզ նևտ մսի ժգենի գտնտատիւշ ոչվտվտր շլ դ զմմտգտ քլ նամզի առնձիւ հզմտգի նկանակ շլ նտոց վտվտր կոյ հզեսի զ

ԺԵԼ քաղաքացիական կորիւների հերոսների կյանքից, ձեռք բերել նրանց նկարները, կարդալ նրանց մասին յեղած պատմը՝ վաճքները, հիշողությունները, Մեր առաջնորդները և հերոսները պետք ե մեր յերեխաների բարձր վոգեորության առարկան դառնան:

բ) Խնտերնացիոնալ դաստիարակություն

Սկզբում մենք ասացինք, վոր կան ընտանիքներ, վողտեղ գոյություն ունեն կրոնական և շովինխտական գաղափարների մասցըրդներ, Կոմունիստական գաստիարակության հիմնական խոդիրներից մեկն ել այդ յերեւութիւնի գեմ վճռական պայքար մղելն եւ Մեր յերեխաները թե դպրոցում և թե ընտանիքում պետք ե գաստիարակվեն ինտերնացիոնալիստական և հակակրոնական վոգով։ Խնտերնացիոնալ դաստիարակության գըծով պետք ե յերեխաներին ծանոթացնել այն համերաշխության, վոր գոյություն ունի Խորհրդային Միության տարբեր ազգությունների պատկանող աշխատավորության մեջ։ Անհրաժեշտ ե ծանոթացնել հեղափոխական հերոսների կյանքին, հերոսների, վորոնք տարբեր ազգությունների պատկանելով հանդերձ՝ ծառայում ելին բանվոր գասակարգի շահերին, մինույն գործի համար աշխատում։ Վորպես զրույցի նյութ պետք ե ոգտագործել մինույն գործարանում աշխատող տարբեր ազգության պատկանող հարվածայինների աշխատանքները՝ ծանոթացնելով «ՄՊՊԲ»-ի աշխատանքներին և այլն։

գ) Հակակրօնական դաստիարակություն

Ըստանեկան դաստիարակության հիմնական խոդիրներից մեկն ել հակակրոնական պայքարը կազմակերպելու գործն է, պետք ե յերեխաներին ծանոթացնել, թե ինչպես կրոնը միշտ յեղել ե սորկացման գվավոր միջոցը, ինչպես ցանկացել կրոնի միջոցով աշխատավորությանը միշտ պահել հնարանդուստրուկտուրի կուտակում կրոնական ծանոթացների այսպիսի պահանջությունը։

Եյդ ուղղությամբ խոշոր նշանակություն կունենան բընտիտական զրույցները, բնության յերեւութների գիտական, բայց պարզ բացատրությունները։ Այդ աշխատանքներին խոշոր ոգնություն կարող են ցույց տալ պիտոներները։ Միևնույն բակի պիտոներները կարող են ծնողների հետ զրույցներ կազմուկերպել։ Վորպես զեկուցողներ կարող են նույնիսկ հրավիրել ուսուցիչներից, կամ պիտոներական աշխատակիցներից։

դ) Կուլտուրական ունակություններ դաստիարակելու։

Այժմ անցնենք կուլտուրական ունակություններ զարգացընելու խնդրին։ Խորհրդային քաղաքացին իր կուլտուրականությամբ պետք ե կանգնած լինի ամենաբարձր մակարդակի վրա։ Վոչ մի բուրժուական յերկրում չկան կուլտուրական զարգացման համար այն նախադրյաները, վորոնք կան մեղանում։ Այդ տեսակետից մեր գպրոցը, մեր ընտանիքը և մեր հասարակայնությունը պետք ե կենդանի որինակներ հանդիսանան յերեխաների համար։ Մեր յերեխաների սովորությունները, հայացքները, մորալը—այդ բոլորը պետք ե զնել նոր ուղղու վրա—կոմունիստական ուղղու։ Կուլտուրական մարզը պետք ե հարգանք տածի թե գեպի իր աշխատանքը և թե գեպի իր ընկերների աշխատանքը։ Հասարակական աշխատանքը պետք ե նրա գուրգուրանքի և խընամքի առարկան դառնա։ Նա պետք ե տիրապետի ժամանակակից տեխնիկայի և գլուխթյունների սկզբունքներին, նա շըրջանայաց պետք ե լինի, հանրակըրթական ու պղղութեանիկ լայն կրթություն պետք ե ունենա։ Մեր յերկրի կուլտուրական մարդը պետք ե ճեաներեց լինի, հասարակական չլիդ ունենա, ստեղծագործող յերեխակայություն և կոնկրետացնելու ընդունակություն։ Անձնուկան կյանքում նա համեստ պետք ե լինի։ Նրան խորթ պետք ե լինի շոայլությունը, իսկ գեպի իր անձնափորությունը պետք ե լինի պահանջնություն։ Կապիտալիստական յերկրներում կուլտուրան բուրժուազիայի ձեռքին շահագործման գըլխավոր զենքերից մեկն ե. Կուլտուրան և դրա բարիքները մի բուռն շահագործողների համար են, իսկ մեղնում կուլտուրան վոզդ աշխատավոր մասսային ե պատկանում, ծոռայում ե բուրքի կենացաղը բարեկալելու համար։

Այստեղ մենք մտադիր չենք շնչափելու կուլտուրականության և բարյագիտության վոզդ խնդիրներն իրենց ամրոցը մանրամասնությամբ։ Մենք շոշափեցինք այն հիմնական պահանջները, վորոնք գրվում են խորհրդային քաղաքացու տուած՝ վորպես կուլտուրական անձնավորություն և վորպես դաստիարակի։

Կըկնում ենք, ինչպես կենինն առում եր, վոր կապիտալիզմը միլիոնավոր տաղանդներ ճնշում ե, ճգմում, խեղդում ե,

մինչդեռ խորհրդային յերկուում յուրաքաջուրին հնարավորություն և տրվում իր տաղանդն, իր ընդունակությունները ցուցաբերելու, իր ամբողջ ուժով աշխատելու:

Կուլտուրական ունակություններ զարգացնելու գործում խոչոր նշանակություն ունեն եքսկուրսիաները, եքսկուրսիաները կարող են լինել դպրոցական և վոչ զարոցական: Գործարանի բանվորի կամ ծառայողի յերեխան իր ընկերների հետ հանգստի որին հաճախում և գործարան: Նրանց ծանոթացնում են գործարանի արագագրությանը, մեքենաների աշխատանքին: Նույն բանը կարող է անել աշխան մի հիմնարկ, իսկ գյուղում կանեն կոլլուզի ու սովորողի արտադրական ձյուղերը, մեքենատրակտորային կայանը և այլն:

Միթե յուրաքանչյուր ծնող հնարավորություն չունի ամիսը մեկ կամ յերկու անգամ իր յերեխաների հետ անցնելու հեղափոխական թանգարանը, տեխնիկա-տնտեսական ինստիտուտը, գրադարանը: Այդ եքսկուրսիաները, բացի այն, վոր մտերմություն են ստեղծում յերեխաների և մեծերի մեջ, միաժամանակ ահազին կուլտուրական պաշար են տալիս մասուկներին:

Վեր գործարանում կամ հիմնարկում ծնողներ չկան: Այդ ծնողներից յուրաքանչյուրն իվիճակի յի ամիսը մեկ անգամ, 2 ամիսը մեկ անգամ հանգստյան որերին իր յերեխայի և նրա դասընկերների համար եքսկուրսիա կազմակերպելու, վորտեղ ինչքը, կամ հիմնարկի աշխատակիցներից մեկնումնելը կվերցնի իր վրա բացատրողի պարտականությունները: Բայց վոչ մի տեղ այդ փորձերը չեն արվում: Վերցնենք, թեկուզ ավելի փոքր մասզտարով, բակի յերեխաների կուլտուրական սպասարկման գործի կազմակերպումը: Վեր բակում և կազմակերպվում կուեկտիվ ռադիո ունկնդրություն, ֆիզկուլտ պարապմունք, կոլեկտիվ ընթերցանություն, խաղ, եքսկուրսիա և ընդհանարապես կուլտուրական ժամանց և հանգիստ. վոչ մի բակում, իսկ այդ միանգամայն հնարավոր և կազմակերպել և առանձին գժվարությունների հետ կապված չե—վոչ դրամական՝ վոչ ել կազմակերպչական:

Մեծ տներում կան բժիշկներ, ուսանողներ, գիտաշխատողներ, գյուղատնտեսներ, ինժեներներ, տեխնիկներ, ուսուցիչներ և այլն և վերջապես բարձր դասարանների ուսանողներ: միթե նրանք թեկուզ հանգստի որերը յերեխաների համար հետաքրքիր ժամանց կազմակերպել չեն կարող:

## 10. ՏՆԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

### ա) Պոլիենինիզմի գծով

Մանուկները սիրում են կառուցողական զանազան աշխատանքներ կատարել, և ընդհանրապես նրանց մեջ դեպի տեխնիկան մեծ հետաքրքրություն կա: Դժբախտաբար օր ջատ ժամանակ նըրանց ձեռներցությունն ու հետաքրքրությունն այդ ուղղությամբ վոչ միայն արձագանք չի գտնում մեծերի կողմից, այլև յերբեմն ծնողների մեջ նույնիսկ դժգոհություն և առաջացնում: Հետեւ վանքն այն և լինում, վոր յերեխաներից շատերն իրենց արդ բընույթի աշխատանքներն սկսում են ըընդհատակյաց ձևով տանել: Մեկ ել տեսար պատշգամբի մի ծայրում, կամ նկուղում լսվեց նրանց թրընկթը ընկուցը: Ծնողները չեն գիտակցում, վոր իրենց այդպիսի վերաբերմունքով իսեղում են յերեխաների ընդունակությունները: Դիտեն արդյոք ծնողները, վոր թափառական լըրագրավաճառը, վորն ապրանքատար վագոնի մութ անկյունում իր տպարանը շինեց և գատարկ շերից ու մի կտոր մետալոյիդից կարողացավ տնային հեռագրամեքենա պատրաստել, դարձավ համաշխարհային հայտնի գյուտարար Թումաս Եղիսոնը:

Մեր յերեխաները դպրոցում ստանում են մի շաբաթական գիտելիքներ. ընականորեն նրանց մեջ մեծ պահանջ ե ծագում տեսական գիտելիքների մի շաբաթ ամենաշատ փորձել գործնական կերպով: Վոչ մի կասկած չկա, վոր յեթե մենք հընարավորություններ ստեղծենք նրանց տեխնիկական վորոնումներն ու հետաքրքրությունը բավարարելու, նրանցից շատերն Եղիսոններ կդառնան: Տեխնիկական ունակությունները, բացի իրենց գործնական նշանակությունից, խորացնում և ամրապնդում են աշակերտների ստացած մի շաբաթ գիտելիքները Փիզիկայից, մաթեմատիկայից, քիմիայից և այլն: Յերեխայի համար տանը տեխնիկական անկյուն ստեղծելը, լինի այդ պատշգամբում, լինի խոհանոցում, կամ սենյակում, հնարավորություն և տալիս նրան ոգտակար աշխատանքով զբաղվելու:

Վերքան գեղեցիկ ազգեցություն են թողնում տեխնիկայի կամ մի այլ անկյուն աշխատանքներն աշակերտի վրա: Դպրոցից վերադառնալուց հետո յերեխան թող աղատ ժամին զրադիքի աշ-

խատանքով։ Այդ արդեն գրավական է, վոր նա այլևս դժվար թե հրապուրվի փողոցով։ Տեխնիկայով զբաղվելու առավելություններից մեկն ել այն է, վոր աշակերտները խորացնում են լայնացնում են դպրոցում ձեռք բերած գիտելիքները, առանձին հետաքրքրություն են հանդես բերում գիտություններն ուսումնասիրելիս։ Դեռահասի այդ բնույթի աշխատանքները զարգացնում են նաև նրա կոնստրուկտիվ ընդունակությունները։ Վերևում մենք հիշատակեցինք, վոր մի շարք մանուկ և պատանի գյուտարարներ արժեքավոր աշխատանքներ են տվել զանազան բնագավառներից՝ ավիոմագելիզմի, ելեկտրոտեխնիկայի, քիմիայի և այլն, և այլն։ Յեթե այդ գործարներն այսոր կոնստրուկտորական բարձր ընդունակություն են հանդես բերում, ապա այդ պատահականորեն չի յեղել։ Դրանց մեծ մասն օժանդակություն ե ստացել դպրոցից, իրենց ծնողներից, բարեկամներից կամ հիմնարկ-ձեռնարկություններից։ Կարեռն այն է, վոր յերեխաների մեջ հատաքրքրություն առաջացնենք դեպի տեխնիկան, դեպի կոնստրուկտորական աշխատանքները։ Սակայն յերեք հարկադրական միջոցների չպետք է դիմել, անհրաժեշտ ե համապատասխան միջավայր սահեղձել վոր յերեխայի մեջ այդ հետաքրքրությունն առաջ գա։

Ծնողները և գաստիարակները պարտավոր են ուսումնասիրել յերեխային։

Մենք յերեխային լավ չենք ճանաչում։

Մեզնից գետ շատերը մանկական և պատանեկական տարիքի մի շարք առանձնահատկությունները հայտարարում ենք վերաբերություններ։ այդ «թերությունների» դեմ պայքարում ենք, աշխատում ենք վերացներ Որինակ՝ մի շարք ծնողներ և հասակավորներ յերեխայի արագաշարժությունը, աշխուժությունը, անկեղծությունը, հարցասիրությունը, հետաքրքրությունը համարում են թերություն, և հաճախ լսած կիննեք, թե ինչպես «թերությունների» համար կշտամբում են յերեխաներին։ «Ե՞ս, բավական ե զահելիս տանես», «Զայնդ կարիք, գլուխս տարար», «Այդ հարցերը քո խելքի բանը չեն, մեկ ել այդ չլսեմ»։

Ծնողները չպետք է անտեսն տարիքի տարբերությունը և յերեխաներին չպետք է նայեն վորպես փոքրիկ մեծերի։

Ուստի այն, ինչ հատուկ է և վորոշ տարիքի մանուկներին, յերեք չպետք է աշխատել արհեստականորեն և ուժով վերացնել

յերեխայի միջեց, ընդունելով, վոր յուրաքանչյուր հասակում մարդին ամբողջական և ինքնուրույն եյակ ե՝ համապատասխան տվյալ տարիքիք։ Յուրաքանչյուր տարիքի յերեխաներ տալիս են իրենց շրջանից մի շարք ընդունականձնավորություններ յերաժշտության ասպարեզում, մաթեմատիկայի, գրական, կոնստրուկտորական, դյուտարաբության և այլ ասպարեզներում։ Սակայն այդ չի նշանակում, վոր այդպիսի յերեխաների միջից արհեստականորեն վտարվել են նրանց տարիքային բնորոշ և տանձնատառ կողմերը։

Ծնողների և հասակավորների աշխատանքը պետք է լինի դաստիարակել՝ յենելով յերեխայի այդ տարիքային առանձնահատկություններից և կոմունիստական զաստիարակության պահանջներից։

Վերցնենք յերեխաներին տեխնիկայով հետաքրքրելու խընդիրը։ Մենք սասցինք, վոր յերեխաները չատ մեծ հակում ունեն դեպի կոնստրուկտորական աշխատանքները, դեպի տեխնիկան։ Կառուցել քանդել ու նորից սարել, ձեռքը փոխել—յերեխայի ամենասիրելի աշխատանքներն են։ Վորպեսզի այդ աշխատանքներն ավելի հետաքրքրական լինեն, պետք է տանը համապատասխան միջավայր ստեղծել—տարօք մանկական հասակին համապատասխան գործիքներ, մողեներ, փայտի և տախտակի կտորներ և զանազան այլ նյութեր՝ թղթերի կտորներ, մեխ, մետաղալար և այլն, և այլն։

Հետաքրքրություն դեպի տեխնիկան՝ կարելի յե զարգացնել հաճախելով թանգարանները, ցուցահանդիսները, կառուցումները, վորտեղ յերեխաների ուշագրությունը պետք է դարձնել մեքենաների մողեների ու մեքենաների մասերի վրա։ 1935 թ. ամբիել ամսին Յերեանում տեղի ունեցավ մանկական ստեղծագործությունների հարուստ ցուցահանդիս—ցուցազրկեցին նկարներ, մողեներ, կոլեկցիաներ, վորոնք իրենց կատարելագործությամբ կարող եյին մըցել մեծահասակների գործերի հետ։ Սակայն հարց և ծագում—յերեխաների հետ քանի ծնող և ցուցահանդիս հաճախել և նրանց ձեռքից բռնած մի եքսպոնատից մյուսն անցել՝ անհրաժեշտ բացարություններ տալով։ Կասկածում եմ, թե այդպիսի ծնողների թիվը չատ լինի։ Մինչդեռ այդ լավագույն

միջացն ե՝ յերեխայի մեջ համրւստ բովանդակությամբ անմիշական մտապատկերներ ստեղծելու համար:

Միաժամանակ պետք ե յերեխային հետաքրքրել տեխնիկային վերաբերող մանկական մատչելի գրականությամբ: Ճիշտ ե, այդ ուղղությամբ քիչ բան ունենք հրատարակում — «Ինչպես տիրապետել տեխնիկային» «100000 ինչուաք Պերեմանի «Հետաքրքրաշարժ Փիղիկա» և մի քանի ուրիշ գրքեր: Խելապ, պետք ե այստեղ հիշատակել նաև այն անհեթեթ սովորության մասին, վոր հնից ե մնացել, այդ այն ե, վոր շատ ծնողներ կարծում են, թե տեխնիկայով պիտի հետաքրքրվեն միայն տղաները, իսկ աղջկները տեխնիկայով չխելաք ե հետաքրքրվեն կամ զբաղվեն: Մեզանում, յերբ կինը ներգրավված ե հասարակական, քաղաքական և պետական կյանքի բոլոր բնագավառները, վոչ մի խոսք չի կարող լինել աղջկներին տեխնիկայով չզբաղվելու մասին: Ընտանիքը պետք ե ծգտի, վոր աղջկներն ամեն կերպ ներգրավված լինեն տեխնիկական գանազան խմբակներում:

Տեխնիկայով զբաղվելու աշխատանքները, բացի այն, վոր զարգացնում են յերեխաների ընդհանուր պատրաստությունը, նրանց կոնստրուկտորական ընդունակությունները, միաժամանակ նպաստում են յերեխաների և զեռահասների ֆիղիկական զարգացմանը, զարգացնում են նրանց մեջ կամքի կայունություն, ճարպկություն և այլն: Անհրաժեշտ ե միայն հետեւ վոր յերեխաների ուղարկությունը կենտրոնանա, և սկսված աշխատանքներն ափարտվեն. Թե չե՞ շատ հաճախ յերեխան մի աշխատանք սկսում ե և այդ չափարտած՝ անցնում ե մի այլ աշխատանքի, ու այդպիսով նրա մեջ չի զարգանում այն տոկունությունը, վորը պահանջում է յօւրաքանչյուր աշխատանք հասցնել իր վախճանին: Կամ մի այլ յերեւոյթ, յերբ յերեխան միաժամանակ մի քանի, իրարից տարբեր աշխատանքներ և սկսում, հետագայում դժվարանում ե կենտրոնանալ դրանց վրա, այդ աշխատանքները նույնպես մնում են անավարտ: Ընտանիքում տեխնիկայի վերաբերյալ աշխատանքներ կազմակերպելու գործում պարոցը պարտավոր ե ոգնել ծնողներին զանազան ցուցումներով. մանկական տեխնիկական կայանների, ինչպես և դըմքոցների հրահանդիչները նույնպես պետք ե ոգնեն:

բ) Նոր մարդու խնդիրը յեկ ընտանիքը

Մենք այստեղ նոր շոշափում դպրոցի անելիքները. մեր նպատակն ե՝ կանգ ունել ծնողների դաստիարակչական դերի վրա: Մենք չենք և ակադրում դպրոցական դաստիարակությունն ունտանեկան դաստիարակությունը: Դպրոցական կրթությունն ու դաստիարակությունը համարելով կոմունիստական դաստիարակությունը գլխավոր և հիմնական ողակը, մենք գտնում ենք, վոր ընտանեկան դաստիարակությունը պետք ե ոգնի դպրոցին, այլ վոչ թե խանգարող հանգամանք հանդիսանա:

Յեթե սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու համար մեր նպատակն ե՝ «կապիտալիզմի մնացորդների լիկվիդացիան եկոնոմիկայի և գիտակցության մեջ» ապա պարզ ե, վոր այդ կարևոր խնդիրը լուծելու գործն առաջին հերթին դրվում է դըմքոցի վրա, և ընտանիքն ու հասարակակայնությունը պետք ե ոգնեն դպրոցին այդ բարձր միսիան կատարելու:

Առաջին հնգամյակը միանգամայն փոխեց մեր յերկրի տընտեսական գեմքը. յետամնաց ազգարարին յերկիրը կոմունակցության և մեր մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ հանճարեղ և իմաստուն զեկավարությամբ վերափոխվեց առաջնակարգ ինդուստրիալ և մեքենայացված ու կոլեկտիվացված գյուղատնտեսության յերկրի: Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրներից մեկը կաղըրերի խնդիրն ե, կաղըրերի, վորոնք վորոշող գործոնն են հանդիսանում. նոր մարդու խնդիրն ե դրվում, վորի հոգեբանության մեջ նույնպես պետք ե աշխատականորեն վերացվեն կապիտալիստական հոգեբանության մնացորդները: Այդ անհամեմատ ավելի դժվար խնդիր ե:

Ուստի դաստիարակության խնդիրները՝ լինի այդ դըմքոցում, դպրոցից գուրս՝ հասարակական կազմակերպությունների գծով կամ ընտանիքում, նոր իմաստ են ստանում—նոր մարդու խընդիրն ե այդ: Նոր մարդ, նոր կենցաղ—ահա այն հիմնական նըսպատակը, վորը լուծելու յե դաստիարակությունը: Այդ տեսակետից կոմունուրը և պիտոներական կազմակերպությունը ավանդաբում պետք ե լինեն:

գ) Տնային ընթերցանություն.

Այսուհետև անհրաժեշտ է լավ հիմքերի վրա դնել յերեխաների ընթերցանության դորձը. Ընթերցանությունը պետք է յերեխայի համար պահանջ դարձնել: Խորհրդային յուրաքանչյուր ըանվոր կամ ծառայող հնարավորություն ունի մանկական պատասխեկան գրքեր գնելու: Յերեխաներին պետք է սովորեցնել իրենց գրադարանն ունենալու: Ընդհանրապես պետք է հետապնդել, վոր յերեխաները հարուստ պատկերացումներ ունենան, պետք են զարգացնել նրանց մտահորիզոնը: Ճշմարիտ են, այդ ուղղությամբ ծանրության խոշոր մասը դպրոցի վրա յեւ ընկնում, սակայն զպրոցից դուրս ճիշտ կաղմակերպված ժամանցը նույնպես զարգացնում է յերեխաների մեջ ձեռներեցություն, խորացնում է զպրոցում ձեռք բերած գիտելիքները. զարգացնում է յերեխաների մեջ զիտողությունը, ստեղծագործական ջիղը, վորոնք նըպաստում են յերեխայի կուլտուրական աճին:

Կարենը և խոշոր նշանակություն ունի մանուկների արտադրված բոցական ընթերցանությունը: Ճշմարիտ են՝ արտադրուցական ընթերցանությունը կաղմակերպելու և զեկավարելու գործը հիմնականում ընկնում են զպրոցի վրա, — սակայն այդ բնագավառում ընտանիքը նույնպես մեծ անելիք ունի: Ամեն զեղքում եւ յերեխաների արտադրուցական ընթերցանության գործը հըմուտ զեկավարություն են պահանջում: Այդ պատճառով ծնողները պետք են մշտական կատ պահպանեն դպրոցի հետ, հետաքրքրվեն, թե ինչ գրքեր են հանձնալ պատրաստի աշակերտներին. Կաղմեն գրքերի ցուցակը և աստիճանաբար ձեռք բերեն այդ գրքերը: Այսուհետև ծնողները պետք են հետաքրքրվեն և հետեւեն, վոր յերեխան ձեռքն ընկած ամեն մի գիրք չը կարգա:

Միաւ են այն կարծիքը, թե յերեխայի ձեռքն ամեն տեսակի գրքեր կարելի յեւ տալ: Յերեխային մենք պետք են տանք այն գրքերը, վորոնցով կարող ենք ոդուտ տալ նրան, վորոնք կը գրաստիարակեն նրան կոմունիստորեն: Գիրքը յերեխային ոդուտ կլինի միայն այն ժամանակ, յերե համապատասխանում է նրա տարիքային ունակություններին, յեթե գիրքը իդեոլոգիապես համապատասխանում է կոմդաստիարակության պահանջնե-

րին, յեթե զարգացնում է մանկան մտապատկերները, բառապաշարը, յերբ յերեխային ծանոթացնում է գլուխթյան և տեխնիկայի նվաճումներին, յերբ լայնացնում է յերեխայի մտահորիզունն ու ծանոթացնում մեծ մարդկանց կյանքին, իր յերկրի և ժյուլ յերկիրների ժողովուրդների կյանքին, պայմաններին, յերբ զարգացնում է յերեխաների գեղարվեստական զգացումները, ըստակեղում և նրանց մեջ հույզեր, զարգացնում խորհրդային պատրիոտիզմը: Ուստի պարզ ե, վոր ամեն տեսակ գիրք չկետք ետք ուալ յերեխայի կամ զեռահասի ձեռքը:

«Խաչագողի հիշատակարան»-ի կամ «Եերլոկ Հոլմս»-ի նըման արկածական վեպերը բացահայտորեն վնասակար կլինեն: Յերեխաների մտապատկերները լայնացնելու և առողջ ֆանտազիայի դեմ չեն, վոր առարկում ենք. մեր հերոյիկան, ստրատոսփերայի, բնության և նրա յերեւույթների նվաճումները, Զելյուսկինյան եպոպեյան—հրաշալի ընթերցանության նյութեր են: Առողջ ֆանտազիան շատ հետու յեւ քրեյական այն արակածներից, վորոնցով լի յեն մի շարք գրքեր, և վորոնց դեմ ե, վոր մենք առարկում ենք:

Մենք դեմ ենք յերեխայի՝ ժամանակից վաղ հասունանալուն. մեր յերեխաները պետք են զարգանան նորմալ կերպով: Բուլորովին կարիք չկա, վոր յերեխան ժամանակից շուտ կարգան գիտական աշխատությունները, վորոնք կարող են միայն ֆրազերովիա սովորեցնել, այլ վոչ թե զիտություն:

Յերեխաների անային ընթերցանության գործը զեկավարելու համար ծնողները պետք են կապվեն զպրոցի հետ և ծանոթանան, թե ինչպես պետք են տանը զեկավարել մանկան ընթերցանությունը: Ընթերցանությունը լավ արդյունք չի տալիս այն գեղքում, յերբ ընթերցողը, ինչպես առում են «Ճրի պես» որական 100-150 եջ կարգում ե. — այս գեղքում բացակայում է գիտակցական ընթերցանությունը, աշակերտը շատ քիչ բան և ըմբռնում կարգացածից, և նրա ուղեղում կատարյալ շփոթ և ստեղծվում:

Ցուրաքանչյուրը ընթերցողից պահանջվում է գրքի հետ միասին ձեռքի տակ ունենալ տեսքը ու մատիտ, նա պարտավոր է գրի առնել անհասկանալի բառերը, դժվար մտքերը, իր տպավորությունները, ցիտատներ արտագրել և այլն, և այլն:

Պարզ ե՝ առաջնություն տալով գեղարվիստական գրականությանը, չպետք է անտեսել նաև քաղաքական, հասարակականու գիտական պոպուլյար գրքերն ու բրոյշուրները:

Մանկան ընթերցանության գրականությունը պետք է բազմազան լինի, պետք է ընդգրկի մարդկային գիտելիքների բոլոր բնագավառները, գրված լինի մաքուր և աշխատ լեզվով, բաց անի յերեխաների առջև կյանքի լավ և բովանդակալից կողմերը:

Մեր մանկական թե ինքնուրույն և թե թարգմանական գրականությունը, ճիշտ և, հարուստ չե, բայց կայնպես կարելի յեմի շարք լավ գրքեր ընտրել չով. Թումանյանի, Չարենցի, Բագրենցի, Ստ. Զորյանի, Խնկո Ապոր, Հ. Հայրապետյանի, Նորենցի և մյուս գրողների գրվածքներից. Կան նաև թարգմանական գեղեցիկ գրվածքներ՝ Իլյինի «Մեծ պլանը» Պառատովսկու, «Կարաբուգաղ», Արմենի «Դերսու-Ռւզալա», Սերաֆիմովիչի «Յերկաթե հեղեղ», Ֆուրմանովի, «Չապայեվ» Բելախիլիշի «Ճիսան ալբում ե» և այլն, և այլն:

Գիրքը կարգալու հետ միասին յերեխաների մեջ պետք է զարգացնել գրքի կուլտուրան: Գետք և յերեխան սովորություն դարձնի սիրել գիրքը, խնամքոտ վերաբերմունք ունենա և աստիճանաբար կազմի իր գրադարանը: Մեր և ոտար կլասիկները, ինչպես նաև քաղաքական մատչելի գրականությունը պետք է աշակերտի գրադարանի հիմքը կազմեն: Լենինի, Ստալինի մատչելի աշխատությունները, Թումանյան, Պուշկին, Գորկի, Չեխով, Չարենց, Վշտունի, Զարյան, Սիրաս, Սարյան, Բակունց, Չորյան, Շոլիխով և մյուս նոր գրողները: Ճշմարիտ ե, այդ բոլոր գրողների յերկերից, գրեթե 3-րդ դասարանի դասագրքերից սկսած, հատվածներ են տրվում դասարանական վերլուծության համար, սակայն ընթերցանության համար անհամեշտ և ձեռքի տակ ունենալ գրողի ամբողջական յերկը, վորպեսզի հնարավոր լինի թե գրողի և թե գրվածքի մասին ավելի լրիվ գաղափար կազմել:

Խորհրդային դպրոցը, նպատակ գնելով ապահովելու յերեխաների բազմակողմանի զարգացումը, չի սահմանափակվում միայն խորհրդային գրականությամբ, Այնպիսի մեծ գրողներ, ինչպես, որինակ, Շեքսպիր, Մոլիեր, Բայրոն, Գյուլթե, Շիլեր, Պուշկին, Հայնե, Տորգենև, Տոլստոյ, Հյուոլո, Դիկենս, Չեխով, պետք է

ժանոթ լինեն մեր յերեխաներին: Յերեխաներն անպայման պետք ե ծանոթանան համաշխարհային լավագույն գրքերին՝ որինակ՝ «Ռոբինզոն Կրուզո» «Գուլիվերի ճանապարհորդությունները» և այլն:

Այնուհետև կարգացած գրականության շուրջը զրոյց պետք ե տեղի ունենա: Յերեխաները պետք է պատմեն իրենց աըպավորությունները, հայտնեն իրենց կարծիքը: Ցանկալի յե հաճախ կազմակերպել ընդհանուր ընտանեկան և կոլեկտիվ ընթերցանություն՝ թե գեղարվեստական և թե քաղաքական հողվածների և ճառերի:

Յերեխաներին շատ են հետաքրքրում կենսագրական ակնարկները, հեղափոխական արկածները: Վերքան հետաքրքրությամբ նրանք կկարդան Զապայեվի, Շչորսի, Կամոյի կյանքի եպիզոդներից. բայց դժբախտարար հրապարակի վրա շատ քիչ բան ունենք այդ ուղղությամբ: Նույն դրությունն ե աշխարհագրական և պատմական պատմվածքների նկատմամբ, մինչեւ աշխարհագրական և պատմական լավ շարադրված պատմվածքները—ճանապարհորդությունները, արկածները, պատմական գեպքերը, հերօսությունները, —շատ ուժեղ կերպով վոգեռում են մանուկներին և բոցավառում նրանց հուզական աշխարհը:

Գիտական Փանտաստիկ գրականությունը նույնպես մեծ արժեք և ներկայացնում յերեխաների համար: Ցայտուն կերպով տալ ապագայի հեռանկարները, գեղեցիկ պատկերները, գիտության ապագա նվաճումները—ահա կարևորը:

Համեկոմկուսի (բ) կենակումը մանկական գրականության մասին արած վորոշման մեջ ասում ե.

«Անհրաժեշտ և տալ մի ջարք հետաքրքիր գրքեր, առաջին հերթին ցածր ատրիբետ յերեխաների համար (հեքիաթ, շաբաթներ և այլն): Ծնողների պարտականությունն ե՝ ողներ յերեխաներին գրքեր ձեռք բերելու, մանկական գրադարան կազմելու:

դ) Թատրոն յել Կինո,

Մանուկների կոմունիստական դաստիարակության գործում, ինչպես և նրանց ժամանցի և խելացի զվարճանքը կազմակերպելու համար խոշոր նշանակություն ունեն թատրոնն ու կինոն:

Ճիշտ ե, դպրոցները մերթ ընդ մերթ այդ անում են, սակայն վոչ լրիվ չափով և վոչ ել լավ կազմակերպված։ Պարզ ե, վոր դպրոցների կազմակերպած հաճախումներով մանուկները չեն բավարպում։ Նրանք դրանից դուրս իրենք հաճախում են և թատրոն, և կինո։ Բայց այդ կատարվում ե առանց ընտրության և առանց վորոշ նպատակի։

— Կինո յեմ գնում, վող տվեք։

— Ա՛ս վողն ու գնա, — ասում ե ծնողը։

Ի՞նչ կինո, յԵրբ և սկսվելու, արդյոք յերեխան մի վորնեռ ոգուտ կատանամ, թե վոչ — այդ հարցերը ծնողներից շատերին շատ քիչ են հետաքրքրում։ Բայց մի կարող ե յերաշխավորել։ Վոր մեր կինոներում միշտ ել յերեխաներին մատչելի կամ լավորակ ֆիլմեր են ցուցյա տալիս։ Մեկ-մեկ արտասահմանյան այնպիսի անհաջող ֆիլմեր են լինում, վոր վոչ միայն յերեխաների, այլ նույնինուկ հասակավորների համար անիմաստ են։

Յերեխաները շատ շուտ տպավորվող են և հաճախ ընկնում են քրեյական եպիգոդների ազդեցության տակ և... աշխատում են խաղի միջոցով, կամ առանձին փորձերով վերականգնել արդ եպիգոդներն իրականում։ Հաճախ ե պատահում, վոր յերեխաներն աշխատում են եկրանի վրա տեսածը կյանքում կրկնել։

Կրկնում ենք, վոր կինոյի զարգացողական դաստիարակչական դերը խոշոր ե, սակայն ինչպես վերելում գրականության նկատմամբ ընտրության խնդիր դրինք, այսուղ ել կինոյի նը-կատմամբ ենք այդ խնդիրը դնում։

Այժմ մենք մի շաբք արժեքավոր մանկական ֆիլմեր ունենք. կան և այնպիսի ֆիլմեր, վորոնք հետաքրքրական են և շատ արժեքավոր թե հասակավորների և թե փոքրահասակների համար՝ «Չապայելվ», «Կապիտանի աղջկելը», «Կորուված մալիկներ», «Մայր», «Գիգոր», «Հանդիպականը» և այլն, և այլն. Ծնողները հատուկ ժամեր պետք են նվիրեն յերեխաների հետ կինո հաճախելու։ Այդ հաճախումները պետք ե լինեն առաջին սեանուներին։

Մի քանի խոսք ել թատրոններ հաճախելու մասին։ Այնտեղ, վորտեղ կան մանկական թատրոններ (տյուզեր), թատրոն հաճախելու գործը կազմակերպում ե դպրոցը։ Սակայն կան մի շաբք պիյեսներ, վորոնք մտնում են մեծահասակների ռեպեր-

տուարի մեջ, բայց միևնույն ժամանակ արժեքավոր են նաև մանուկների և դեռահասների համար — 12-ից բարձր տարիք ունեցողների, որինակ՝ «Խելվիզոր», «Պեպո» և այլն։ Այս դեպքերում շատ լավ կլինի, յեթե ծնողները խորհրդակցեն դասարանի դեկավար ուսուցչի հետ, թե ինչպիսի ներկայացումներ յերեխաները կարող են հաճախել։

Դյուզերում յերեխաների համար պետք ե ոգտագործել շըրշիկ թատրոնները և սիրողների խմբերը։ Դպրոցը պետք ե բանակցի այդ թատրոնների դեկավարների հետ, վորպեսզի տարեկան մի քանի ներկայացում հատկապես մանուկների համար լինի։

Այդ հնարավոր ե և անհրաժեշտ։

Յերեխաների գեղարվեստական ճաշակը զարգացնելու և նըրանց գիտական պաշարը խորացնելու համար կան շատ միջոցներ, մանավանդ քաղաքներում, վորտեղ թանգարաններ կան, վորտեղ պարբերաբար զանազան ցուցահանդեսներ են կազմակերպվում։ Մեր և ոտար նկարիչների լավագույն նկարներին մեր յերեխաները պետք ե ծանոթանան։ Զանազան թերթերում լինում են հաջող արտանկարներ։ Դրանցից լուրաքանչյուր ընտանիք կարող ե շատ լավ ալիոններ պատրաստել Այդ հնարավոր ե և քաղաքներում, և գյուղերում։

Յերեխաների կյանքում մեծ տեղ ե րոնում մանկական խաղը։

### յ) Խաղն ընտանիքում

Փոքր հասակից, գեր շատ աշխատում է խաղով զբաղվելու։ Խաղի մեջ յերեխան աշխատում է բավարարել իր կենսական պահանջները և հետաքրքրությունը։ Խաղերը զարգացնում են նրա կոնստրուկտիվ ու ատեղծագործական ընդունակությունները։ Խաղերի միջոցով հեշտ ե լինում պայքարել մանկական անդիսցիպլինարության դեմ, հեշտ ե լինում հետու պահել վատ սովորություններից և չարությունից, յերբ յերեխայի եներգիան գործազրվում ե խելացի զվարճանքի ուղղությամբ։ Խաղի ժամանակ յերեխան իրեն ցուցաբերում ե ամբողջապես, առանց քաշվելու, առանց ծածկամառնության, և հանդես ե գալիս, իր բոլոր առանձնահատկություններով։ Այդ հնարա-

վորություն և տալիս ծնողներին՝ ավելի լավ ուսումնասիրելու իրենց յերեխաներին, ավելի լավ ծանոթանալու նրանց, Բայց դժբախտությունն այն ե, վոր ծնողներից շատերը յերեխայի խաղերին նայում են վորպես չարության վրա, մռանալով խաղի դաստիարակչական նշանակությունը, նրա անհրաժեշտությունը, նրա ոդտակարությունը, Խաղի ժամանակ յերեխան զարգացնում և իր զգացողությունները՝ տեսողությունը, լսողությունը, շոշափողությունը, դինամիկան, ճարպիկությունը, տոկունությունը, ուշագրությունը, կամքը: Լավ կազմակերպված խաղերը զարգացնում են յերեխաների մեջ կոլեկտիվ հասարակական ունակություններ և ընկերական զգացմունքներ: Այսուհետեւ խաղերը մեծ չափով ոժանդակում են յերեխաների առողջության ամրապնդմանը, դարձնում են նրանց կենսուրախ և ձեռներեց, այսինքն խաղը տալիս և յերեխային մի շարք այնպիսի հաւակություններ, առանց վորի դժվար և լիարժեք անձնավորություն ստանալ:

Խաղերը ծնողներից շատ բան չեն պահանջում, բացովիյա խաղերն ինարկե վոչինչ չեն պահանջում. դժվար չի ձեռք բերել վառլեյրոլ, կրոկետ, կեղպի, դնդակ, շախմատ, դահուկներ, սահուկներ և այլն: Այդ ամենը շատերություն չե, այլ անհրաժեշտություն:

Խաղերը պետք ե հեռու կազմակերպել՝ կեղտու վայրից, վորտեկ յերեխաները հեշտ կերպով կարող են վարակվել:

Լավ ե, յերե ծնողները նույնպես մասնակցում են խաղերին և աննկատելի կերպով ղեկավարում խաղի ընթացքը. սակայն զգուշաբար՝ չնշելով յերեխաների ինքնուրույնությունը և անհատուկանությունը:

Այս բոլորից չողետք ե յեղբակացնել, վոր յերեխաներին պետք ե հարկադրել հակառակ իրենց կամքի խաղերով զբազվելու, լինի այդ աղատ ժամերին, թե հանգստի որեցին:

Բավական և տրամադրություն ու համապատասխան միշտավայր ստեղծել, և յերեխան առանց վորեւ հարկադրանքի կըզբազի խաղով:

## 11. ՊԱՅՔԱՐ ՀԻՆ ԿԵՆՑԱՂԻ ՄՆԱՑՈՒԹՅՈՒՆԻ ԴԵՄ

Վոչ մի յերեկում մարդու կուտուրականության համար այնքան նախապայմաններ չկան, վորքան խորհրդակին յերկըում: Դրանով պետք ե բացատրել մասսաների մեծ ձգտումը զեղի կուլտուրան և մեր իշխանության խորհրդակույն ձեռնարկումներն արդ ուղղությամբ: Բայց և այնպիս մենք այսոր պետք ե խոստավանվենք, վոր գեռ մեր անկուլտուրականությունից շատ մնացորդներ կան: Անա այդ մնացորդները վերացնելու և կուլտուրականության խնդիրն ե դրվում: Անկուլտուրականությունը մեր կենցաղում հանդես և գալիս մանր-մունք գործերում և արտահայտվում և կոպտությամբ, անմաքրությամբ, տգեղ շարժ ու ձևով, հակառակողապահական զործողությամբ, հարբեցողությամբ, հայոյանքներով և այլն, և այլն: Վորքան ել վոր դրանք յեղակի լինեն, մասր լինեն, մենք չպետք ե մոռանանք, վոր այդ մանր-մունք արարմունքներից գոյանում են անկուլտուրական սովորությունները: Դրանք քանի գնում այնքան ավելի լուրջ բնույթ են ստանում: Խոկ մեզ բոլորիս շատ լավ հայտի յե, թե վորքան խոզոր նշանակություն ունեն սովորությունները մեր կյանքում: Ուստի անհրաժեշտ ե յերեխաների մեջ օկզրից եեթ ստեղծել այնպիսի ունակություններ, վորոնք կնպաստեն յերեխայի կուլտուրականությանը, յերեխայի կոմունիստական մորալը կլինի:

Մինչև զարդոց գնալը, տանը՝ փողոցի կամ այլ ազգեցության տակ յերեխաները շատ անգամ սովորում են սիալ արտասանությունների, հայոյանքի, ստախոսության (ցագոք սրախ պետք ե ասել վոր կան ծնողներ, վորոնք նույնպես ստում են յերեխաների մոտ), անմաքրության: Մենք տեսնում ենք, թե ինչպես ընտանեկան և շրջապատի անկուլտուրականությունն իր խորը հետքերն ե թողնում յերեխաների վրա: և այդ յերեխաները մեծ դժվարությամբ են ընտելանում զպրոցական կյանքին, դասեր սովորելուն:

Հարատեև աշխատանք և հարկադր այդպիսի յերեխաների միջից անկուլտուրականության հետքերը վոչնչացնելու: Այստեղ զպրոցը, պիոներ կոլեկտիվը և ընտանիքը պետք ե միասին աշ-

խատեն, համագործակցություն ստեղծեն: Կան յերեխաներ, վորոնք դպրոցում իրենց վորոշ ժամանակ զապված են պահում, սակայն հենց վոր գոտները զարոցից դուրս են դնում, սկսում են դանագան անկարգություններ անել՝ հայհոյել, տրամվայի, կառքերի պոչին կպչել, քար նետել, անցօրդների նկատմամբ կոպտություններ թույլ տալ, ելեկտրական զանգեր քաշել, չների հետեւց ընկնել և այլ անկարգություններ անել: Ծնողները պետք ե հետեւ և հետաքրքրվեն այդպիսի յերեխաներով, դիմելով անհրաժեշտ դաստիարակիչ միջոցների, և այդ մասին հայտնեն, դպրոցին, վորպեզի համապատասխան աշխատանք կազմակերպիլ այդ յերեխաների հետ:

Մեր կենցաղում շատ հաճախ նկատվում ե, վոր յերեխաները չունեն քաղաքավարի վերաբերմունք դեպի իրենց ընկերները, գեղի հասակավորները: Տրոմվայում նստած ե աշակերտը. տրամվայ և մտնում մի ծերունի, կամ վատառողջ մարդ, կամ կին—յերեխան գրկին, հատ քիչ աշակերտ իր տեղը կզիջի նրանց:

«Սովորեցնել մանուկներին իրենց տեղը զիջել ծերունիներին, կանանց, ոգնել նրանց, ընկած իրը բարձրացնել և հանձնել, քաղաքավարի կերպով ցույց տալ հարցրած հասցեն, խոսակցության ժամանակ չընդհատել—չեն համարվի արդյոք այդ բոլորը կեղծավորություն, մնացորդներ հինուեժիմից, հաճոյանալու ձգումներ: Վաչ չի համարվի, Քաղաքավարությունը կեղծավորություն չե: Սիրալիք լինել—չի նշանակում ստորաքարշ լինել: Ով յերեխայի կոպտությունների ու անքաղաքավարության դեմ չի պայքարում, նա չի ոժանդակում պրոլետարական դաստիարկությանը, այլ ընդհակառակ՝ մղում ե նրանց գեղի հետ» (Մ. Կոլյով):

Յերեխաների դաստիարակության գործում մի շատ կարևոր հանգամանք կա՝ այդ այն ե, վոր յերեխաներին լավ դաստիարակելու համար ծնողներն ու դաստիարակներն իրենք նույնպիս պետք ե հետեւ իրենց վարմունքներին՝ տալով յերեխաներին քաղաքավարության, ուշադիր լինելու, ուրիշին ոգնելու, մաքրության, զգեստը և կողիները մաքուր պահելու լավագույն որինակությանը համարեն: Հասակավորների լավ որինակները, նամանավանդ

ծնողների և ուսուցիչների որինակները, շատ մեծ դաստիարակչական նշանակություն ունեն:

Յերեկի պատահած կլինեք, վոր ծնողները կամ դաստիարակյանության հերեխաներին «լոիր» ասելու տեղ ասում են՝ «ձենդ կտրիր» «սակվիր»: Ընդհանրապես յեթե մենք հետեւելու լինենք հասակավորների ցույց տված վերաբերմունքին գեղի յերեխաները—շատ կոպտություններ կնկատենք:

Խորհրդային քաղաքացու ընտանիքը դպրոցական հասարակայնության ոժանդակությամբ պետք ե մեր յերեխաների մեջ զարգացնի մի շարք ունակություններ և սովորություններ:

Ահա այդ ունակությունների և սովորությունների մինիւմումը:

1. Միանգամայն կանոնավոր և մաքուր պահպանել ու վորոշ տեղում պահել բոլոր իր իրերը՝զգեստները, վոտնամանները, գրքերը և այլն (յերեխային պետք ե տրվի վորոշ հարամարություն):

2. Լինել մաքրասեր, կարգապահ՝ թե դպրոցում, թե տանը և թե հասարակական վայրերում. չթքել չաղտոտել, թղթի կը տորներ չզցնել՝ ուր վոր պատահի:

3. Հետեւ զգեստին ու վոտնամաններին և միշտ մաքուր պահել:

4. Վոչ մի տեղ և վոչ մի դեպքում չհայհոյել, խուլիդանություններ չանել, կոպիտ չլինել:

5. Խոսել մաքուր գրական լեզվով, խռոակցության ժամանակ չընդհատել ուրիշներին:

Զափազանց կարևոր և յերեխաների մեջ աշխատելու կուլտուրա մացնել, նրանց ուսցիոնալ աշխատելու յեղանակներ սովորեցնել, աշխատանքը կատարել գիտակցորեն, մտածված կերպով և կազմակերպված:

Զպետք և աշխատանքների մեջ խճճկել, մի քանի տարեր աշխատանքներ միաժամանակ սկսել և դրանցից վոչ մեկն ել չափարտել:

Սկսած աշխատանքը պետք ե ավարտել:

Դպրոցը մենակ չի կարող յերեխայի բոլոր աշխատանքներին հետեւ, նրա բոլոր աշխատանքները զեկավարել, ստուգել ընտանիքի վրա խոշոր պարտականություն ե դրվում, նը-

դպաստել դպրոցի դաստիարակչական աշխատանքների ծավալման  
և ամրապնդման գործին: Դպրոցում ձեռք բերած լուրաքանչյուր  
գրական նվաճում պետք է ընտանիքում ամրապնդվի և դառնա յե-  
րեխայի սեփականությունը. ընտանիքը փաստորեն պետք է գառ-  
նա դպրոցի ոգնականը յերեխայի դաստիարակության գործում:  
Այդ աշխատանքներում վորոշ փորձ տվին սերպուխովցիները:  
Ստորև, վորպես հավելված, տալիս ենք Մոսկվայի մարզի Սեր-  
պուխով քաղաքի՝ Համեկոմիկուսի (բ) քաղկոմի, Համ. ԼԿՅԵՄ քաղ-  
կոմի, քաղխորհրդի և քաղպրոֆխորհրդի վորոշումը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԻ ՍԵՐՊՈՒԽՈՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԿՈՄ-  
ԿՈՒՄԻ (Բ) ՔԱՂԿՈՄԻ, ՀԱՄ. ԼԿՅԵՄ ՔԱՂԿՈՄԻ, ՔԱՂԽՈՐ-  
ՀՐԴԻ ՅԵՎ ՔԱՂՊՐՈՓԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄ «ՔԱՆՎՈՐԱ-  
ԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՅԵՐԵԽԱՎՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆԴԱՍԻ-  
ԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՈՒՐՏԻ ՄԱՍԻՆ»:

Լենինին Ստալինի կուսակցությունը և խորհրդային իշխա-  
նությունը նախորդ 17 տարիների ընթացքում խոշորագույն աշ-  
խատանք են կատարել յերեխաների դաստիարակության գործը  
կազմակերպելու համար: Դպրոցներում տարվում ե յերեխաների  
ընդհանուր ուսուցումը, միլիոնավոր յերեխաներ ընդգրկված են  
պիոներ կազմակերպության մեջ, կազմակերպված ե նաև լայն  
ցանց մսուրների, մանկապարտեզների, մանկական կոնսուլտա-  
ցիաների, գրադարանների, մանկական սանատորիաների, ճամ-  
բարների և հրապարակների:

Ընտանիքներում, վորտեղ յերեխան անց ե կացնում իր  
ժամանակի մեծ մասը, հաճախ յերեխայի կուլտուրական դաս-  
տիարակության համար չեն ստեղծվում ամենատարրական նը-  
պաստավոր պայմաններ: Յերեխաների սանձարձակությունը,  
նրանց ներկայությամբ հայնոյելն ու հարբելը, յերեխաների  
հակասանիտարական պայմանները, յերեխաների կուլտուրական  
պահանջների հանգեց անուշադիր լինելը—բացասական խոշոր  
հետևանքներ են թողնում:

Դրա հետևանքով մինչև որս գոյություն ունի յերեխաների  
մեջ անկազմակերպվածություն, խուլեղիսանություն և մինչև իսկ  
հանցագործություն:

Պայքար հանուն առողջ փոխարինողների, հանուն դաստի-  
արակված, կրթված, ուրախ և կենսուրախ մանուկների—բոլոր  
աշխատողների գործն ե այդ:

Վոչ թե միայն լավ մսուրներ, մանկապարտեզներ, դպրոցներ, բուժարաններ պետք ե ունենալ, այլ ամեն մի ընտանիք, իրենք՝ մայրերը և հայրերը, ամեն մի տնկոմ, գործկոմ և ժակտ պետք ե հոգ տանի յերեխայի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու: Այս գեղջում կոմոնիստ-ծնողները պետք ե ցույց տան իրենց յերեխաների լավ գաստիարակության որինակը: Լենինյան կոմսոմոլին ու պիոներ կազմակերպություններն առաջամարտիկներ պետք ե լինեն՝ ընտանիքում յերեխաների կոմ-դաստիարակությունը կազմակերպելու գործում:

Սերպուխովի գործարանների լավագույն մայր բանվորութիւնները, ինչպես՝ կոսովի, Եվերտիկնի, Ֆեղիսովի, Թողուշչինի, Սիմանովի ընտանիքները—գործնականապես ապացուցեցին, թե ընտանիքն ինչքան շատ բան կարող ե անել յուր յերեխայի դաստիարակության բարեխավման գործում:

Համկոմկուսի (Բ) քաղկոմը, Համ. ԼԿՅԵՄ-ը, քաղխորհուրդը, քաղպրոֆխորհուրդը վորոշում են ոգտագործել Մագնիտոգորսկի և Կիյևի փորձը:

1. 1934 թ. գեկտեմբերի 1-ից մինչ խորհուրդների 7-րդ համագումարը հայտարարվում է կոնկուրս բանվորական ընտանիքների, մանկավարժների, բժիշկների, պիոներջոկատների, ֆարմակործարանային կոմիտեների, ակումբների վարչությունների, տնկոմների, ժակտերի բանվորական մատակարարման կազմակերպությունների, արտադրության տնտեսվարների—ընտանիքներում յերեխաների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու:

2. Հաստատել կոնկուրսի առաջնության հետեւյալ պայմանները.

### 1. ԸՆԾԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Յերեխայի համար ունենալ առանձին քննելու տեղ (մահակալ կամ թախտ), առանձին ներքնակով և անկողնի սպիտակեղենով: Ունենալ առանձին յերեխսրբիչ, սալոն, ատամի խողանակ և փոշի, ճաշի համար առանձին ամանեղեն (ափսե, գտար, բաժակ), ունենալ հազուստի և սրբիչի համար կախարաններ:

բ) Ունենալ յերեխայի պարապմունքի և խաղերի համար հատուկ անկյուն: Այս անկյունը մաքուր պահել, դարձնել հաճ-

լի և գեղեցիկ, հոգալ մանկական գըքերի, նկարների և խաղա-դիքների մասին:

գ. Բարելավել յերեխայի խնամքը, ընտելացնել նրան մաք-րության (ուտելուց առաջ վանալ ձեռները, քնելուց առաջ լը-վանալ վոտները, ամեն մի վեցորյակում փոխել փոխնորդը): Ամեն որ մաքրել ատամները, կանոնավոր խուզվել և սանրվել: Ամեն որ մաքրել հագուստները և վոտնամանները:

Ժամանակին քնեցնել յերեխային (դպրոցականին գոչ ուշ քան ժամը 8-10), ժամանակին կերակրել նրան: Սենյակը կա-նոնավոր ողափոխել: Հոգ տանել վոր յերեխան բավարար չա-փով մաքուր ողում լինի, անուշադրության չմատնել յերեխայի հիվանդությունը, կանոնավոր հաճախել մանկան կոնսուլ-տացիան:

Ամեն որ ստուգել թե աշակերտ-յերեխան ինչպես ե պատ-րաստել ուսումն առաջադրանքները: Հաճախ այցելել դպրոց և խորհրդակցել ուսուցչի հետ յերեխայի առաջադիմության և վարքի մասին: Զգտել, վոր յերեխան մանկավարժների ցուցումով իմա-նա մի քանի վոտնավորներ, պատմվածքներ, յերգեր ու խաղեր:

### 2. ՏՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՅԵՎ ԲՆԱԿՎԱՐՉԱԿՈՊՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Հատկացնել ժակտի կամ հանրակացարանի բակում հրապա-րակներ մանկական խաղերի համար, ունենալ սաոցի բլրակ, հրա-պարակ, նստարաններ՝ հանգստանալու համար, տախտակ՝ ճոճվե-լու համար, գերան՝ վրան մանգալու համար, վալեյբոլ, սահնակ-ներ, դահուկներ, սայլակներ և ճոճ:

բ) Ունենալ մանկական հատուկ սենյակ՝ գրքերով, նկարնե-րով, բարձրախոսով (շաշկա, շախմատ, դոմինո և այլն), ունենալ հանրակացարանում և ժակտում մանկավարժնե-րից, բժիշկներից և մայրերից հրահանդիչներ՝ ծնողների և յերե-խաների համար:

### 3. ԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱՐ

ա) Ամեն մի հանգստի որ անցկացնել մանկական տոններ (մանկական ինքնագործունեյություն, ներկայացում, կինո):

բ) Ակումբում հատկացնել մանկական ակումբարային սենյակ՝

տարբեր հասակների մանկական խաղալիքներով։ Դպրոցի և պիուներավարների հետ միասին կազմակերպել ակումբում մանկական խմբակներ՝ դրամատիկական, մողելային, նկարչության և այլն։

բ) Ակումբին կից ունենալ գահուկային բազա, մանկական սղղան, մեծ սառցյա բլրակ և անհրաժեշտ պարագաներ (դահուկներ, չմուշկներ և սահնակներ)։

#### 4. ՊԻՈՆԵՐ ԶՈԿՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Ավանովել դպրոցում բոլոր պիոներների համար լավագույն առաջադիմություն։

բ) Ընդգրկել ջոկատի բոլոր յերեխաներին դպրոցի ակումբի և հանրակացարանի տարբեր խմբակների մեջ։

գ) Ցուցաբերել քաղաքի ծառատնկման և կանաչազարդման պահպանության լավ աշխատանք։

դ) Դպրոցական և պիոներական կարգապահության կադմառուժման վոչ մի դեպք։

ե) Ունենալ անհրաժեշտ պիտույքները (թմբուկ, գրոշակ) և մեծ թվով յերեխաներ, վորոնք լավ իմանան պիոներական խաղեր, պարեր, վոտանավորներ, յերգեր և պատմվածքներ։

3. Կոնկուրսի ղեկավարությունը հանձնարարել մրցման ժուրին, հետեւյալ կազմով՝ ընկ. ընկ. Անդրելել (նախագահ), Խվորուտյանիկով (փոխնախագահ), Սակսեն, Ռյաբով, Ֆոմինով, Կալգենովա (Համ ԼԿՅԵՄ), Բլագով (խ. տրեստ), Կազակովա (քաղլուսբաժին), Չերնեխ (Շնաբատ), Պավլովա (քաղլուսբաժին), Ստրելկովա (Լուսաշխ), Բարենոսովա, Նիկիֆորովա, Ալեքսանդրի, Սինիչիկնա։

Տրամադրել կոնկուրսի ժուրիին 25000 ռ., մրցման լավագույն մասնակցողներին պարզեցրելու համար։

4. Վորոշել հետեւյալ նվերները՝ կոնկուրսի լավագույն մասնակցողների համար։

Լավ մայրերին և հայրերին 15 մրցանակ 100—200 ռ.

Լավ մանկավարժներին 15 » 100—200 ռ.

Լավ բժիշկներին . . . 5 » 200—300 ռ.

Ֆաբրիկ-գործարանների լավ նախագահներին . . . 3 » 200—300 ռ.

Ակումբի լավ վարիչներին . . . 3 » 100—200 ռ.

#### Կոմյերիտ կոմիտեի լավ քար-

տուղարներին	. . . .	3 մրցանակ	100—200 ռ.
Լավ պիոներ ջոկատներին	. . .	5 »	100—200 ռ.
Լավ պիոներներին	. . . .	100 »	20—50 ռ.
Լավ տեղակոմիներին և ժակտերին	10	»	100—1000 ռ.
Լավ մանկական խմբակներին	15	»	50—200 ռ.

Խանութների լավ վարիչներին, վորոնք յերեխաներին լավեն սպասարկում — 3 մրցանակ . . . 100—300 ռ.

Բացի այդ, առանձնացնել 3000 ռ.—հասարակական գծով յերեխաների հետ լավ աշխատանք տանողներին վարձատրելու համար։

Համկոմկուսի (բ) քաղկոմի, Համ. ԼԿՅԵՄ-ի քաղիսորհրդի, քաղ. պրոֆիլորհրդի միացլալ ժողովը բոլոր տեղական կազմակերպություններին նախազգուշացնում ե, վոր այս կոնկուրսի իրավործումը հանդիսանում ե քաղաքական կարևորագույն խընդիր, վորը պահանջում ե նրանցից ամենորյա մեծ ուշադրություն և հասարակական բոլոր ուժերի մոքիլուզացիա։

#### ԺՈՂՈՎՐ ԽԱՆԱՑՄԱՐԱԳՈՒՄ Ե.

1. Գործարկոմներին և կոմյերիտմիության կոմիտեներին՝ առանձնացնել հատուկ հրահանգիչներ, պիոներ ջոկատներին ամրացնել ցեխային կազմակերպությունների ջոկատներին, ընդգրկել այդ գործի համար լավագույն բանվորուհիներից՝ հասարակական աշխատանքի գծով յերեխաների մեջ աշխատելու համար։

2. Կուսկոմներին՝ ստեղծել գործարաններում մրցման տեղական ժուրիներ, արտադրության գիրեկտորի նախագահությամբ։

3. Քաղլուսբաժին—առ 1-ն դեկտեմբերի կարգի բերել յերեխայի գեղարվեստական դաստիարակության շրջանային տունը։

4. Քաղլուսբաժիններին՝ կազմակերպել կամավոր հրահանգիչների խմբակներ լավագույն մանկավարժներից, բժիշկներից զ մայրերից՝ յերեխաների մեջ հանրակացարաններում և ժակտերում աշխատելու։

5. Կուսկոմներին, կազմակերպություններին՝ սիստեմատի-

կորեն լսել հաշվետվություններ կոմունիստ ծնողներից՝ իրենց յերեխաների դաստիարակության մասին:

6. Քաղխորհուրդներին—հրապարակել պարտադիր վորոշում մանկան անապաստանության և հանցագործության դեմ պայքարելու մասին:

Հանձնաբարել դատախազին, համաձայն որենքի, դատական պատասխանատվության յենթարկել քաղաքացիներ կողլովին և Դիմիտրովին՝ նրանց յերեխաների հանցագործ սանձարձակության, խուլիգանության և գողության համար:

7. Պարտավորեցնել խոշոր՝ գործարանների գործարկումներին՝ ունենալ ակումբային հաստիքային աշխատակից—յերեխաների մեջ աշխատանք տանելու համար, և ապահովել յենթաշեֆ պիռ-ներջոկատներին անհրաժեշտ իրերով և գործիքներով:

8. Կոնկուրսի ժյուրիի աշխատանքի պլանը հաստատել:

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ՍԵՐՊՈՒԽՈՎԻ ՔԱՂԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
(Մ. Ա.ՆԴՐԵՅԵՎ)

ՀԱՄԿՈՄԿՈՒՄ ՍԵՐՊՈՒԽՈՎԻ ՔԱՂԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ (Ռ.ՑԱԲՈՎ)  
ՍԵՐՊՈՒԽՈՎԻ ՔԱՂԿՈՄԿՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԺՊԿ (ՏԻՄՈՅԵՅԵՎ)  
ՍԵՐՊՈՒԽՈՎԻ ՔԱՂԿՐՈՅԵՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ (ՄԱԿՈՇԻՆ)



48. 163

ԳԻՒԾ 60 ԿՈՊ.



Լ. Խ Ս Դ Օ Յ Ա Ն

Коммунистическое воспитание ученика и семьи

Гиз ССР Армения, Эривань, 1935 г.